Ազգ

AZG
armenian newspaper

Նոյեմբեր 27. 1991
Չորեքշաբթի
եռօրեայ թերթ.
Ա տարի, թիւ 82
գինը՝ 30 կ.

դասիչ՝ 69149
հասցէն՝ Երեւան 375010
Հանրապետութեան 47
հեռախօս՝ 581841
ֆաքս՝ 562941
տելեքս՝ 243267 SULA SU

Եւրախորհրդարանը կաթի փոշի է ուղարկում Հայաստան

Փարիզից հատուկ հեռաձայնով ստացած տեղեկության համաձայն, Եւրախորհրդարանը որոշեց Խ. Միությանը սննդամթերքի օգնության Ֆոնդից առանձնացնել *«հատուկ Հայաստանի համար կաթի փոշի»*, ինչը հաստատվեց Ֆրանսիական Կարմիր խաչի Երեւանի գրասենյակում:

Մի քանի ամիս առաջ այս առաջարկով Հայաստանի կառավարությունը դիմել էր Եւրախորհրդարանին, ինչը հաստատվեց կարճ քննարկումից հետո, հոկտեմբերի վերջին:

Կաթի փոշին, մոտ 1800 տոննա, բերվելու է բեռնատարներով, Ռուսաստանի եւ Վրաստանի վրայով: Բեռնատարների մի մասը ճանապարհվել է նոյեմբերի 19-ին: Դրանց մոտավոր թիվը 95 է: Փոխադրումն իրականացնում է Ֆրանսիական Կարմիր խաչը, որը նման աշխատանքների մեծ փորձ ունի: Կարմիր խաչի երկու ղեկավարներ՝ Ժակ Դելորեն եւ Ջոյսոնդ Պերինին նոյեմբերի 23-ին ժամանեցին Երեւան կազմակերպելու ստացման եւ բաշխման աշխատանքները: Սպասվում է, որ առաջիկա երկու ամիսներին բոլոր բեռնատարները տեղ կհասնեն: ■

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Պատերազմը հարկաւոր է միայն Գորբաչովին

Ուղղաթիռի վթարն այն պատրուակն էր, casus belli-ն, որն անհրաժեշտ էր Ադրբեջանին Հայաստանի դեմ պատերազմ յայտարարելու համար: Սակայն պատերազմն ինքնին, որքան էլ պարադոքսալ թուայ, անհրաժեշտ չէր եւ չէ Ադրբեջանին, ինչպէս որ չէր եւ չէ, բոլորովին, Հայաստանին, որն այլապէս վաղուց արդէն եւ բազմիցս ստացել էր եւ է իր casus belli-ները՝ յաջորդական երջափակումներն ու ջարդերը: Պատերազմը պետք չէ Ադրբեջանին նոյնիսկ Արցախի հարցը լուծելու գործում, այլ պարզապէս այն կլինի եւս մի փաստ, որ Բաքուն չունի այլընտրանքային որեւէ տարբերակ՝ Հայաստանի փոխզիջողական առաջարկների դիմաց: Այդ փաստը վերահաստատուեց նաեւ երեկ, երբ Ադրբեջանի Գերագոյն խորհուրդը, ծիծաղելի ժողովական ձեւման տակ, իր վրայից պատասխանատուութիւնը գցեց Ազգային խորհրդի կամ Մեջլիսի վրայ:

Անշուշտ, ուժային միջոցներով Արցախի հարցը լուծելու ախորժակներն ու քաղաքականութիւնը նոր չեն ադրբեջանական իշխանութիւնների համար, նրանք այն կիրառում են արդէն երեք տարի: Սակայն, դեռեւս չունենալով կազմաւորուած բանակ եւ բաւարար ուժ՝ ընկճելու քաջարի արցախցիներին, նրանք միշտ էլ այն փորձել են անել խորհրդային զորքերի զանգուածային աջակցութեամբ: Իսկ այժմ, առանց այդ զորքերի օգնութեան, նրանք առավելագոյնը կարող են շարունակել Արցախի եւ Հայաստանի հանրապետութեան դեմ շղթայազերծուած մաւնուի պատերազմը՝ մաշելով նաեւ իրենց: Իսկ եթէ նրանք մի անգամ եւս իրենց յոյսը դրել են բանակային մեղսակից ուժերի վրայ, ապա հետեւում է, որ այն լինելու է ոչ թէ իրենց, այլ ուրիշների՝ այսպէս կոչուած Կենտրոնի պատերազմը: Այլ խօսքով, ուղղաթիռի վթարի պատրուակի տակ (վթար, որը կարող է կազմակերպուած լինել նաեւ Կենտրոնի դիվերսիոն ծառայութեան կողմից) Բաքուն յայտարարած կլինի ոչ թէ իր, այլ ուրիշների պատերազմը, որից նա ի վերջոյ չի օգտուելու:

Եւ ընդհակառակը, պատերազմը որքան անհրաժեշտ չէ Հայաստանի եւ Ադրբեջանի համար, այնքան անհրաժեշտ է Կենտրոնի եւ այն անձնաւորողի՝ Միխայիլ Գորբաչովի համար: Յայտնի՝ որպէս «ներքին կոնֆլիկտների մարդ», իր քաղաքական հոգեվարքի պահին, ներկայումս, նա դարձել է առաւել վտանգաւոր: Բնականաբար, չունենալով պատմութեան անիւը յետ երթալու՝ Խորհրդային կայսրութեան փլուզումը կանգնեցնելու որեւէ միջոց, յենուած Արեւմուտքի եսակենտրոն քաղաքականութեան վրայ, նա փորձում է, ինչպէս միշտ, սրել ներքին հակասութիւնները երկրում եւ յատկապէս Անդրկովկասում:

Բուն դժբախտութիւնն այն է, սակայն, որ երկրի ժողովրդավարական ուժերը, դերանքի լինեն Ռուսաստանում, թէ նոյնիսկ Ադրբեջանում, միանգամ եւս զոհ են դառնում այդ խաղաւանքին, առանց գիտակցելու, թէ Մեծ խաղավանողի յաջողութիւնը ձախողութիւնն է բոլորիս:

Ինչ վերաբերում է մեզ, մեր ժողովրդին, Հայաստանում, Արցախում թէ Սփիւռքում, մեր առաքելութիւնն է համախումբ ու կազմակերպ դիմանալ եւ դիմադրել: ■

ԽՍՀՄ-ի 1992 թ. մի շարք արտաքին տնտեսական պարտաւորությունների կատարումը խափանման սպառնալիքի տակ է հանրապետությունների ինքնիշխանացման եւ կառավարման համամիութենական կառուցվածքների լուծարման հետ կապված գործընթացների պատճառով: **«Մինչ այժմ պարզ չէ, թե ով ինչպես կկատարի դրանք»**, այդ մասին հայտարարեց արտաքին տնտեսական փորձագետներից մեկը, նշելով, որ կան հարցեր, որոնք հանրապետությունները միայնակ լուծել չեն կարող: ■

Զինադադարության օրինագիծը ընդունվեց միաձայն

Խորհրդարանը անդրադարձավ նախագահի հարցին

Նոյեմբերի 25-ին եւ 26-ին Հայաստանի Հանրապետության խորհրդարանը շարունակեց իր աշխատանքը:

Լեռնային Ղարաբաղի Մարտունու շրջանում զինվորական ռազմաթիռի վթարից հետո արձանագրվող լարվածության, Արցախում տիրող իրավիճակի եւ Հայաստանի սահմանամերձ շրջաններում զինված բախումների մասին ելույթ ունեցավ Արցախի հարցերի հատուկ հանձնաժողովի նախագահ Սեյրան Բաղդասարյանը:

Խորհրդարանը այնուհետեւ ձեռնամուխ եղավ կարեւորագույն հարցի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կազմի եւ կառուցվածքի մասին օրենքի քննարկմանը, որի շուրջ բացատրություններ տվեց փոխվարչապետ Հրանտ Բագրատյանը: Պատգամավորները, կետ առ կետ քննարկելով հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից առաջարկները, 156 ձայնով համաձայնություն տվեցին դրանց:

Հայաստանի խորհրդարանը, սակայն, ձայների մեծամասնությամբ մերժեց ստեղծել լրատվության եւ մամուլի նախարարություն, միեւնույն ժամանակ էկոնոմիկայի պետական կոմիտեի եւ արտաքին տնտեսական կապերի նախարարության միացումով ստեղծեց էկոնոմիկայի նախարարություն: Պատմական մի որոշումով հայոց խորհրդարանը վերջապես ստեղծեց պաշտպանության նախարարություն, որից հետո անմիջապես քննարկման դրվեց «Զինադադարության մասին» օրենքը, որն էլ ընդունվեց միաձայն:

Նիստի վերջին 30 րոպեում, ՌԽՖՍՀ պատգամավոր Ալբերտ Բուտորինը ընթերցեց Հայաստանի խորհրդարանին ուղղված Ռուսաստանի խորհրդարանի ուղերձը՝ ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության վերաբերյալ համաձայնագրերի ստորագրման կնքման օրենքում երկխոսության մասին հղված ընդունելու կոչով:

Հայաստանի խորհրդարանը առավել եւս ժողովրդավարական եւ բազմակուսակցական կերպար ստացավ, երբ պատգամավոր Տ. Սարգսյանը հայտարարեց «Ազգային ժողովրդավարներ» պատգամավորական խմբի գոյացման մասին: Պատգամավոր Գ. Իսաղուլյանը խորհրդարանից պահանջեց օրակարգի մեջ մտցնել «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթի խմբագիր Այդին Մուրիկյանի հարցը, որը մեղադրվեց ՀՅԴ-ի դեմ քննադատական հոդված տպելու մեղքով: Գ. Իսաղուլյանը պահանջեց առնվազն պատասխան հոդվածի հնարավորություն տալ: Պատգամավոր Գ. Ավագյանն ասաց, որ դաշնակցության ողջ մամուլը ողողված է ոչ միայն քննադատական, այլեւ զրպարտչական նյութերով:

Երեքշաբթի, նոյեմբերի 26-ին Հայաստանի խորհրդարանը, ընդառաջելով հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանի՝ կառավարության մասին օրենքի քննարկումը նոր փոփոխություններ ենթարկելու կարգադրությամբ հետաձգելու խնդրանքին, անակնկալ կերպով դարձյալ անդրադարձավ խորհրդարանի նախագահի հարցին: Բազմաթիվ թեկնածուների առաջադրումից հետո, փակ գաղտնի քվեարկության արդյունքներով երկրորդ



Լուսանկարը՝ Լ. ԱՐՄԵՆՅԱՆԻ

փուլ անցած Բ. Աւարտցյանն ու Սեյրան Բաղդասարյանը նույնպես չհավաքեցին անհրաժեշտ քանակությամբ ձայներ: Նույնը պատահեց նաեւ տնտեսական ինքնուրույնության եւ տնտեսության զարգացման հարցերի հանձնաժողովի նախագահի դեպքում, երբ մեծ թվով առաջադրվածներից մնացին Հայկ Զախոյանը, Ռոբերտ Թորոսյանը եւ Մելս (Սամվել) Սահակյանը, իսկ փակ քվեարկությունից հետո երկրորդ փուլ անցան վերջին երկուսը:

Նիստի վերջում 13 պատգամավորների անունից հայտարարվեց «Համաձայնություն» նոր պատգամավորական խմբի ստեղծման մասին, իսկ Վանո Սիրադեղյանը կարդաց ՀՀԵ-ի վարչության դիմումը՝ ուղղված Ադրբեջանի ժողովրդին, որով բանակցությունների կոչ է արվում: ■

Լայնածավալ պատերազմ Հայաստանի դե՞մ

Շուշի. Այստեղ տեղադրվել է «Գրադ» (մեքենայի համարը՝ 14-12) ռեակտիվ հարմարանք, որը մեծ անհանգստություններ տեղիք է տալիս: Նրա ոչնչացնող հզորությունը բավականին մեծ է եւ հայտնի է դեռեւս աֆղանական պատերազմից: Անդրկովկասյան զինվորական օկրուգի ղեկավարությունը տեղեկություն չունի, թե որտեղից եւ ինչպես է հայտնվել այդ զենքը Շուշիում: Նրա մի քանի կրակոցները բավական են ամբողջ Ստեփանակերտն ավերելու համար:

Բաքու. Այստեղ շարունակվում են հանրահավաքները, որոնց մասնակիցների թիվը հասնում է 300 հազարի: Կոչեր են հնչում Հայաստանի նկատմամբ լայնածավալ ռազմական գործողություններ սկսելու վերաբերյալ: Երեկ այդպիսի հանրահավաքներից մեկում բազմաթիվ ադրբեջանցիներ զինվել են եւ 30 ավտոբուսներով ուղեւորվել դեպի Աղդամ, Ֆիզուլի եւ Շուշի, որտեղ առանց այդ էլ ադրբեջանական զորքերի մեծ կուտակումներ կան: Վերջին օրերին հաճախակի են դարձել զենքի հայթայթելու նպատակով զինվորների վրա կատարված հարձակումները: բռնագրավվել է 18 ավտոմատ: Նոյեմբերի 25-ին նման մի ընդհարման ժամանակ մահացել են 4 եւ վիրավորվել 2 ադրբեջանցիներ:

Միութենական ՆԳՆ մամուլի ծառայությունից հաղորդում են, որ նոյեմբերի 24-ի լույս 25-ի գիշերը հայ ազատամարտիկները Ստեփանակերտից գնդակոծել են Կրկժան ադրբեջանական, թաղամասը: Վնասվել է 10 տուն, այրվել տեղի կոլտնտեսության ֆերման: Տուժածներ չկան:

Նոյեմբերի 25-ին հայ ազատամարտիկները գնդակոծման են ենթարկել Շահումյանի շրջանի Շեֆեկ եւ Ջեյվա գյուղերը: Ոչնչացվել է վառելանյութի մեկ ցիստերն: Տուժածներ չկան:

Աղդամի շրջանի Պարավենտ գյուղի մոտ անհայտ անձինք քանդել են 300 գլուխ անասուն եւ պատանդ են վերցրել ադրբեջանցի հովվին:

Հայերի զինված խմբերը պայթեցրել են Ղազախի շրջանի տարածքում գտնվող ուժային հոսանքափոխարկիչը: Շրջանի մի շարք գյուղեր մնացել են առանց էլեկտրականության: Սկսվել են վերականգնողական աշխատանքները:

Հայաստանի կողմից գնդակոծման են ենթարկվել Ադրբեջանի Թոռլուի շրջանի Ալիբեյլի եւ Կիչլակ գյուղերը: Երեք հոգի վիրավորվել են: ■

Խ. Միությունը կրճատում է ռազմական ծախսերը

ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանրապետությունների խորհրդի բյուջեի եւ ֆինանսների կոմիտեի անդամ Յուրի Անդրեեւը հաղորդեց, որ կոմիտեում քննարկվել էր 1991 թ. չորրորդ եռամսյակի արտակարգ բյուջեն:

Անդրեեւի խոսքերով, բյուջեի քննարկման ժամանակ արտակարգ բյուջեի ռազմական ծախսերով զբաղվող աշխատանքային խումբը առաջնորդվում էր բյուջետային դեֆիցիտի եւ ԽՍՀՄ ներքին պարտքի կրճատման անհրաժեշտությամբ: *«Ելնելով դրանից,-* ասաց Յու. Անդրեեւը,- *վերանայվեցին ռազմական ծախսերին վերաբերվող բոլոր հոդվածները»:*

Աշխատանքային խումբը առաջարկեց սահմանափակել այդ ծախսերը 1991 թ. 31 միլիարդ ռուբլով:

Յու. Անդրեեւը նշեց, որ սկզբից ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հաստատում էր 1991 թ. ռազմական ծախսերը 96.6 միլիարդ ռուբլու չափով: ԽՍՀՄ Ֆինանսների նախարարության տվյալներով, դրանք կկազմեն 102.7 միլիարդ ռուբլի:

Ենթադրվում է հիմնական կրճատման ենթարկել զենքի եւ ռազմական տեխնիկայի ձեռք բերման ծախսերը: Չորրորդ եռամսյակային ծախսերն կկազմեն 13 միլիարդ ռուբլի:

Մյուս կողմից, ԽՍՀՄ Պետբանկի նախագահի առաջին տեղակալ Վալերիան Կուլիկովը հաղորդեց, որ Պետբանկի տվյալներով, 1991 թ. դեֆիցիտը կգերազանցի ԽՍՀՄ Ֆինանսների նախարարության կողմից նախատեսված 204 միլիարդ ռուբլին 22-25 միլիարդով: Նա հայտարարեց, որ դեֆիցիտը կարելի է ծածկել միայն բորգարդամի բորգարկումով: Նա կասկած հայտնեց, թե ԽՍՀՄ Պետբանկը կհասցնի Ֆինանսների նախարարությանը տալ որեւէ վարկ Ռուսաստանի խորհրդարանի հոկտեմբերի 25-ի որոշումից հետո, որով Պետբանկը անցնում է Ռուսաստանի կենտրոնական բանկի իշխողության տակ: ■

Ադրբեջանում ստեղծվել է Ազգային խորհուրդ

Նոյեմբերի 26-ին Բաքվում փակ դռների ետեւում սկսվեց Ադրբեջանի Գերագույն խորհրդի արտակարգ նստաշրջանը: Պատգամավորների առջեւ ելույթ ունեցավ նախագահ Այազ Մութալիբովը: Այնուհետեւ քննարկվեց Ազգային խորհրդի մասին հարցը եւ հաստատվեց նրա 50 հոգանոց կազմը՝ հավասարապես ընդդիմությունից եւ խորհրդարանի մեծամասնությունից:

Ազգային խորհուրդ ստեղծելու մասին օրենքի նախագիծն ընդունվել էր ընդդիմության նախաձեռնությամբ: Այդ օրենքի համաձայն, Ազգային խորհրդին է հանձնվում խորհրդարանի օրենսդրական լիազորությունների մեծ մասը: Գերագույն խորհուրդը սահմանում է համագումարի կարգավիճակ:

Ադրբեջանի նախագահ Այազ Մութալիբովը հանդես է եկել Հայաստանի հետ տնտեսական հարաբերությունների եւ բանակցությունների խզման դեմ: Ադրբեջանի նախագահը ժխտեց հայ-ադրբեջանական վեճի ռազմական լուծման տարբերակը: Նա դեմ դուրս եկավ նաեւ Ադրբեջանի տարածքում ռազմական դրություն մտցնելուն, ադրբեջանցի ընդանիներին եւ զինվորներին խորհրդային բանակի շարքերից հետ կանչելուն, հանդես եկավ հանրապետության սահմանների անվտանգության անհրաժեշտության, Լեռնային Ղարաբաղի ադրբեջանցի բնակչության պաշտպանության, ազգային բանակի ստեղծումը արագացնելու կոչերով: Այս ամենը, ընդգծեց նա, պետք է իրականացվի օրենքի սահմաններում:

Ինչպես հայտնի դարձավ, նստաշրջանը որոշում կայացրեց լուծարքի ենթարկել Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը եւ փոխել Ստեփանակերտի անունը: ■

digitised by A.R.A.R.@

Փոքր խաղաղության մեծ հանցանքները

Նոյեմբերի 20-ին Արցախում տեղի ունեցած ուղղաթիռի վթարը, որին զոհ գնացին ադրբեջանցիներ, Ռուսաստանի եւ Ղազախստանի ներկայացուցիչներ, խաղաղական շահարկումների առարկա է դարձել: Այս մասին է խորհում եւ սեփական տեսակետը ներկայացնում հեղինակը ստորեւ տպագրվող հոդվածում:

Արցախի օդում տեղի ունեցած ողբերգությունը սպառնում է վերածել լայնածավալ անկանխատեսելի իրադարձությունների: Պաշտոնական մարմինները, մամուլն ու քաղաքական կազմակերպությունները զբաղված են մեղավորների որոնումներով: Բնականաբար, նրանցից յուրաքանչյուրն ունի **մեղավորի իր թեկնածուն**: «Մառախլապտաս եղանակի» տարբերակը հաջորդ օրն իսկ հերքվեց, որովհետեւ այդ տարբերակը քաղաքական հարցեր լուծելու հնարավորություն չի տալիս: Իսկ որ ավիավթարը շահարկվելու է հենց այդ նպատակների համար՝ կասկած չի հարուցում: Պետք չէ բացառել ուղղաթիռի միտումնավոր գնդակոծումը, բայց այս դեպքում բնականոն հարց է ծագում, թե ո՞ւմ է դա ձեռնտու:

Կարո՞ղ է, արդյոք, դա ձեռնտու լինել Հայաստանին: Այո՛, կարող է, եթե հաշվի առնենք այն տնտեսական ու քաղաքական փակուղին, որի մեջ գտնվում է հանրապետությունը՝ չնայած ձեռք առնված բոլոր միջոցներին: Գազամուղի եւ երկաթգծերի շրջափակումը սպառնում է սոցիալական մեծ դժգոհություն առաջացնել ձմռան ընթացքում, որը կօգտագործեն ներկա իշխանությունների քաղաքական հակառակորդները՝ նորընտիր նախագահի իշխանությունը սասանելու համար: Ուստի, ռազմական լարվածությունն Արցախում եւ հանրապետության սահմաններին մոտ մոռացության կտան սոցիալական խնդիրները եւ «Հայրենիքը վտանգի մեջ է» կարգախոսի տակ հնարավոր կլինի ժամանակ շահել, մինչեւ որ կկարողանան որեւէ հնարավոր ելք գտնել ստեղծված իրադրությունից:

Սակայն Հայաստանի քաղաքական ուժերից ոչ մեկը չէր դիմի նման հանդուգն քայլի, հեռանկարում մեծ բարդություններ ակնկալելով ոչ միայն Ադրբեջանի, այլ նաեւ Ռուսաստանի եւ Ղազախստանի հետ ունեցած հարաբերություններում: Նման ծավալի ահաբեկչական գործողությունն անընդունելի է Հայաստանի քաղաքական ուժերի համար նաեւ այն դրսեւորով, որ թե՛ ներկայիս իշխանությունները եւ թե՛ Արցախում մարտնչող այլ ուժերը մեծ հույսեր են կապում Արեւմուտքի եւ Ռուսաստանի հնարավոր աջակցության հետ:

Ձեռնտո՞ւ է սա, արդյոք, Ադրբեջանին: Առանց վարանելու կարելի է ասել, որ ոչ Մութալիբովին եւ ոչ էլ նրա համախոհներին դեմոքրատների նման զարգացումը ցանկալի չէ: «Հավասարակշռված» եւ «իսկողության տակ դահավոր» դաշտերազմը հնարավորություն էր տալիս խուսանավել արտաքին հարաբերություններում եւ երկրի ներսում: Բավական արմատական քայլեր կատարելով Ադրբեջանի անկախության հաստատման ուղղությամբ, Մութալիբովը զրկում էր ընդդիմությանը ապագայում իշխանության հասնելու բոլոր հույսերից: Հակահայկական վայնասունը եւ դիրքային դաշտերազմն Արցախում լիովին բավական էին ներքին դժվարությունների հետ կապված ցանկացած դժգոհությունները կասեցնելու համար: Ուստի, լայնածավալ ժողովրդական հուզումները մայրաքաղաքում կարող են վտանգել ներկա իշխանությունների գոյությունը, եւ լարվածության աճը հանրապետության ներսում դժվար թե նպաստի նրա իշխանության ամրապնդմանը:

Եւ ընդհակառակը, Ադրբեջանի ընդդիմության համար լուրջ հնարավորություն է ընձեռնվել իշխանությունը գրավելու համար: Երեք տարի շարունակ ձեւավորվող ընդդիմությունն, ի տարբերություն հարեւան հանրապետությունների համանման ուժերի, այդպես էլ չկարողացավ գալ իշխանության: Եթե մինչեւ օգոստոսյան խողովությունը նա օգտագործում էր անկախության խաղաքարտը, ապա խողովությունից հետո Մութալիբովն ապացուցեց, որ համապատասխան պայմանների դեպքում կարող է ավելի «անկախական» լինել, քան իր ընդդիմախոսները: Դրանով իսկ Ադրբեջանի ընդդիմությունը զրկվեց պայքարի իր միակ միջոցից, քանի որ «ժողովրդավարության» գաղափարներով Ադրբեջանում իշխանություն չես գրավի: Այսպիսով, իշխանության հասնելու վերջին հնարավորությունը լայնածավալ ազգայնական շարժումն է, որը պետք է ծավալվի այնքան, որ իր ալիքի ուժով տապալի Մութալիբովի իշխանությունը: Կասկածից վեր է, որ ընդդիմությունը կանգ չի առնի ոչ մի ռազդարարության առջեւ, իր նպատակներն իրականացնելու համար: Նրանք չեն կարող չհասկանալ, որ եթե այժմ էլ տանուլ տան, ապա հեռագայում Մութալիբովին տապալելու հույսերը հավասարվում են նվազագույնի: Եւ ուստի, ընդդիմությունը չի բավարարվի «անհնար» ընդհարումներով, նրանց մեծ պատերազմ է պետք, մեծ զոհեր եւ զգալի միջոցներ: Այդ, եւ դրա համար անհրաժեշտ է աջակցել այդ հանդիպումներում ձեւավորված ընդդիմությանը եւ բերել նրան իշխանության գլուխ: Եթե հաշվի առնենք արդեն «դեմոկրատականացված» հանրապետությունների փորձը, ապա վստահորեն կարելի է ասել, որ ընդդիմությունն ամենակարճ ժամանակամիջոցում կկայացնի հանրապետությունների տնտեսական եւ քաղաքական կյանքը, կընդարձակի ներքին տարաձայնությունների եւ իշխանության բաժանման բարդ խնդիրների մեջ: Դրանով իսկ կհեռանա Կենտրոնի կողմից անհրաժեշտ վերահսկողություն հաստատելու գործը:

Ուղղաթիռի վթարը պարզապես անհրաժեշտություն էր, թելադրված իրադրության պահանջներից: Եւ բնավ էլ կարեւոր չէ, թե ում ձեռքով է գնդակոծվել այդ ուղղաթիռը՝ ադրբեջանցի օմոնականի, ռուս զինվորի, թե հայ մարտիկի: Իբրեւ կատարող գործիք կարող էր հանդես գալ նրանցից յուրաքանչյուրը: Քաղաքականության պատմությունը նման «վթարների» բազմաթիվ դեպքեր է հիշում:

Իսկ ժողովուրդնե՞րը: Ի վերջո, նրանց զավակներն են դառնալու «քաղաքական մսաղացի» անողոք հումքը: Պարզ է, որ բոլոր հաշվարկները կառուցվում են ժողովրդական զանգվածների «տգիտության», կովկասյան Ֆանատիզմի եւ ասիական քաղաքագետների մտավոր ամլության «փաստի» վրա: Քանի դեռ մենք ասիացիներս, կարունակենք կռվել միմյանց հետ, «քաղաքակիրթ» Հյուսիսն ու Արեւմուտքը հնարավորություն կունենան յուր լցնել մեր վառած կրակի վրա: Մինչեւ ե՞րբ...

Տիգրան ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
«Հայաստան. Միջին Արեւելք» ամսագրի գլխավոր խմբագիր

Պատրաստվում է ՀՀ օրենքի փախստականների կարգավիճակի մասին

Դեմոկրատացման ուղին բռնած մեր հանրապետության առջեւ շատ եւ շատ խնդիրների կողքին ծառացած է նաեւ փախստականների խնդիրը: Ինչպիսին պետք է լինի նրանց ճակատագիրը հայրենիքում, ցույց կտան ընթացող գործընթացները: Այսօր փախստականների կոմիտեն իրագործում է ՀՀ նախարարների խորհրդի 459 որոշումը:

Այդ կապակցությամբ դիմեցի կոմիտեի նախագահ ***Ալեքսան Հակոբյանին****, ըստ որի՝ 459 որոշման իրականացման հետ կապված արդեն դժվարություններ չկան:*

Զրուցեցի նաեւ կոմիտեի նախագահի տեղակալ ***Ռուբեն Բարսեղյանի*** *հետ:*

– Սկզբնական շրջանում դժգոհություններ եղան փախստականների կողմից, սակայն հիմա դրանք հարթվել են,– ասաց նա: –Ես գտնում եմ, որ այդպիսի մի որոշում կայացնելն անհրաժեշտ էր, որովհետեւ անորոշ վիճակ էր, եւ նախկին իշխանությունների որոշումները չէին գործում: Մենք կազմակերպեցինք շրջաններում, գյուղերում լքված տների գույքագրման, ակտավորման, շրջկենտրոններում կոմոդեսատիվների կառուցման աշխատանքներ: Կատարվում է նաեւ հողահատկացում ցանկացողներին:

– Իսկ ի՞նչ կասեիք փախստականների Երեւանից տարաբնակեցման մասին:

– Երեւանում փախստականները հիմա ժամանակավորապես աղբում են հանրակացարաններում, պանսիոնատներում, հյուրանոցներում, վարձային բնակարաններում, նաեւ աղօրինի բնակարաններում: Մենք կատարում ենք բոլոր փախստականների վերահաշվառում: Դրանից հետո նրանք ընտրում են իրենց առաջարկված համապատասխան տարբերակը՝ կամ պատրաստի տուն գյուղերում, կամ կոմոդեսատիվներ շրջկենտրոններում: Նրանք իրավունք ունեն ապրել Երեւանում, իրենց ցանկության դեպքում, մինչեւ պատրաստ լինեն իրենց բնակարանները: Կարող են օգտվել բոլոր սոցիալական հնարավորություններից, ինչպես Երեւանի բնակիչները. 459 որոշման մեջ այդպես էլ գրված է: Պարզապես դժվար է հանրակացարանների, հյուրանոցների ֆինանսավորման հարցը: Փախստականների ամենամեծ խնդիրը հոգեբանական պահն է: Հարկավոր է նրանց հոգեբանորեն տրամադրել, որ առաջին հերթին իրենք պետք է մեզ օգնեն իրենց խնդիրները լուծելու համար:

Այն փախստականները, որոնք ցուցաբերում են շահագրգռվածություն հարցերի արագ լուծման համար, այսօր ունեն իրենց բնակարանները:

– Իսկ ինչպիսի՞ն է ֆինանսավորումն այդ հարցում:

– Կոմոդեսատիվ բնակարանների համար պետությունը վարկ է տալիս, իսկ տների բարեկարգման համար միջոցներ արդեն տրամադրված են: Ամեն շրջան ստացել է համապատասխան ֆինանսավորում, շինարարական ռեսուրսների համապատասխան ֆոնդեր: Մենք ստեղծել ենք հանձնաժողով, որը պետք է հետեւի այդ աշխատանքներին, շրջաններում ունենք նաեւ մեր ներկայացուցիչը: Փորձում ենք նաեւ համատեղ աշխատել փախստականների հասարակական կազմակերպությունների հետ:

Երբ ավարտվի վերահաշվառումը, հույս ունենք, որ այդ ժամանակ կընդունվի նաեւ օրենք փախստականների կարգավիճակի մասին:

Սակայն, կարծում եմ, որ լավագույն տարբերակը փախստականներին շրջաններում տեղավորելն է, որտեղ կան բազմաթիվ լքված տարածքներ: Չմոռանանք, որ Ադրբեջանն աշխատում է բոլոր փախստականներին բնակեցնել Արցախում:

Հուլիսի 22-ին, Նախարարների խորհրդի 459 որոշմանը դեմ լինելու պատճառով, իր կամքով աշխատանքից ազատվել է փախստականների կոմիտեի նախագահի տեղակալ Դավիթ Պետրոսյանը: Այժմ նա ներկայացրել է իր կոնցեպտուալ առաջարկությունները փախստականների խնդիրների վերաբերյալ:

Դավիթ Պետրոսյան. Երկու եւ կես ամիս, փաստորեն, պայքար էր գնում այդ որոշման դեմ: Առաջինը գաղթականների կողմից, հիմնականում այն պատճառով, որ հաշվի չէր առնվում նրանց քաղաքաբնակ լինելը: Հիմնական պատճառը, որ ես դեմ էի, այն է, որ հարցի լուծման համար ոչ մի ֆինանսական երաշխիք չկա կառավարության կողմից: Դրանք բոլորը դեկլարատիվ կետեր են: Որոշեցի այդ հարցը հիշ թե շատ առաջ գնա, հարկավոր է մոտավորապես տարեկան 200-250 մլն. ռուբլի: Իսկ այստեղ լավագույն դեպքում 12 միլիոնի մասին խոսք կարող է լինել: Խոսքը պետական բյուջեի մասին է: Եւ ուղղակի բլեֆ է, որ գրված է, թե այդ հարցը 1993 թ. պետք է լուծվի: Ինձ մտահոգում է նաեւ այն, որ այդ որոշման մեջ կան վարչական ճնշման կետեր: Երկար ժամանակ, գիտակցելով հանրապետության քաղաքական իրավիճակը, փախստականները բողոքի ցույցեր չէին անում: Սակայն նախագահական ընտրություններից հետո նրանք լրիվ ազատություն են ստացել գործելու համար: Այդ որոշմանը դեմ էին նաեւ Ա. Մանուչարյանը եւ Խ. Ստամբոլցյանի հանձնաժողովը: Այդ որոշումը, փաստորեն, հակասում է ՀՀԾ-ի առաջին համագումարի գաղթականների մասին որոշմանը եւ ՀՀԾ նախընտրական ծրագրին:

Լուսանկարը՝ Լեւոն ՍՊԻՏԵՆՅԱՆԻ

Սերգեյ Աբրահամյան. «Վերադարձ Հայք» հասարակական կազմակերպության նախագահ, փախստական.

Մոտ 110-130 հազար փախստականներ արդեն տեղավորվել եւ բնակվում են շրջաններում: 88-ից մինչեւ 90 թվականը 318 հազար փախստականներ են եկել Հայաստան, սակայն դրանցից 100 հազարից ավելին կրկին հեռացել են Հայաստանից, որովհետեւ արհեստական դժվարություններ են ստեղծվում: Հասկանալի է, որ Հայաստանի վիճակը ծանր է, բայց, համենայն դեպս, այդ փախստականներին հեռանալը նույնպես կորուստ է: Մենք արել ենք առաջարկներ փախստականների կոմիտեին, կառավարությանը եւ Գերագույն խորհրդին: Սակայն Գերագույն խորհրդի նախագահության նիստում այդ հարցի քննարկման ժամանակ մեզ ձայն չտվեցին: Խնդիրը հիմնականում այն է, որ չկա պետական մակարդակով մի ծրագիր, երեւի թե խորհրդարանը դա չի համարում բարդ եւ կարեւոր խնդիր: Կարելի է ասել, որ ոչ մեկը լուրջ չի զբաղվում փախստականների հարցով:

– Իսկ ինչպե՞ս է իրագործվում այդ եղածը:

– Շատ վատ: Փախստականներին սիստեմատիկաբար ուզում են շրջաններ ուղարկել: Հիշեցնեմ չէ, որ ասում են, թե կան պատրաստի տներ, որտեղ փախստականները կարող են ապրել գոնե ժամանակավոր, մինչեւ հնարավորություն ստեղծվի քաղաքներում բնակարաններով ապահովել: Հայաստանում կար ընդամենը 4 հազար ազատ տուն, որոնք արդեն բնակեցվել են փախստականներով: Կարելի է հասկանալ նաեւ այն մարդկանց, որոնք, լինելով քաղաքաբնակ, հոգեբանորեն չեն հաշտվել գյուղում ապրելուն: Պետք չէ սիրել եւ գյուղ չգնալու պատճառով, օրինակ զրկել կտրոն ստանալուց: Իմ կարծիքով, դա անբարոյականություն է:

Մենք արդեն այդ կապակցությամբ կառավարությանն առաջարկություն ենք արել, վերահաշվառում անցկացնել այն մարդկանց համար, որոնք կտրականապես հրաժարվում են գյուղ գնալուց: Առաջարկել հիմնարկներին մասնագետներ վերցնել փախստականներից, եւ հնարավորության սահմաններում հետագայում նաեւ բնակարաններով ապահովել:

Այսօր շատ փախստականներ հեռանում են արտասահման: Եւ, ցավոք, այս անգամ նրանք ոչ թե խորհրդային կարգերից են հեռանում, այլ ընդհանրապես Հայաստանից: Այս քանի տարվա ընթացքում այդպես էլ չստեղծվեց որեւէ մի գործող մեխանիզմ, որի վրա գոնե մարդիկ հույս դնեին: Անցած փախստականների կոմիտեն, իմ կարծիքով, խորությամբ չի ընկալում մեր խնդիրը:

Պատրաստեց Գայանե ԱՅՐԻԿՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Հայաստան-Սփյուռք՝ մեկ թիմի անդամներ

Հայաստանի արտգործնախարարությունում շաբաթ օրը կայացած մամլո ասուլիսում Հայաստանի արտգործնախարար Ռաֆֆի ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ ներկայացրեց իր մեկամսյա գործունեության ամփոփումը եւ պատասխանեց հանրապետության եւ արտասահմանյան լրագրողների հարցերին:

Նախարարը նշեց, որ մոտակա 2-3 ամիսների ընթացքում նախարարությունն ակտիվ աշխատանք պետք է տանի աշխարհի բոլոր տարածաշրջաններում: «Հայաստանի ճանաչման հարցը արծարծելու եւ պնդելու համար մեր աշխատակից Քրիստիան Տեր-Ստեփանյանի հետ վաղը մեկնում ենք Եվրոպա, այնտեղ հանդիպելու Եվրոպայի արտգործնախարարների հետ: Անշուշտ, ինչպես ԱՄՆ-ից եւ Կանադայից, չենք սպասի մեր անկախության ճանաչումը, այնտեղ առաջխաղացը մի փոքր ավելի դանդաղ կլինի, բայց մեզ համար կարեւորն այն է՝ ստեղծել խորը, արմատացած, երկկողմանի հարաբերություններ այդ երկրների հետ, որոնք հիմք կհանդիսանան հետագա ձեւական ճանաչման փաստի համար: Ինձ թվում է, Հայաստանի պատմության մեջ եկել է այն ժամանակաշրջանը, որ բոլորս պետք է մեզ զգանք նույն Հայաստանի թիմի անդամներ: Եթե այս գաղափարն իրոք խորանա ու տարածվեցնենք, կզգանք, որ աղագայում ոչ մի ուժ, ոչ մի կառավարություն մեր երազանքը՝ մեր երկիրն այլեւս մեր ձեռքից չդիտի կարողանա խլել: Սա կարեւոր է եւ մեր արտաքին քաղաքականության, եւ ներքին վիճակը կայունացնելու համար: Հայաստանի քաղաքականությունը հիմնված է օրենքի իշխանության վրա, մեր աղագան մենք պետք է ստեղծենք ժողովրդավարական սկզբունքներով, միջազգային իրավունքը հարգելով, մարդու եւ փոքրամասնությունների իրավունքներն ունենալով որպես մեր քաղաքականության հիմք»: Այնուհետեւ Հովհաննիսյանը նշեց, թե Հայաստանը վարում է երկմակարդակ քաղաքականություն: «Մենք որոշել ենք մասնակցել տնտեսական ընկերակցությանը եւ այդտեղ գոյություն ունեցող բոլոր կառուցողական գործընթացներին, բայց դա ենթադրում է, որ այն դառնա անկախ երկրների կամավոր համագործակցություն»:

Ինչ վերաբերում է վերջին շրջանի անցուդարձին, դա «Ադրբեջանի հերթական փորձն է Ղարաբաղի հարցը բռնի ուժով լուծելու: Հայաստանը, ինչպես միշտ, պատրաստ է քաղաքական ճանապարհով լուծել, բայց եթե շարունակվի եւ ռազմական, եւ քաղաքական, եւ տնտեսական ագրեսիան Հայաստանի դեմ, մենք պետք է բանակցությունների հետ զուգահեռ մտածենք նաեւ մեր սահմանները պաշտպանելու մասին: Արտգործնախարարների հետ պետք է խոսենք ոչ միայն մեր երկկողմանի հարաբերությունների զարգացման, այլ նրանց ուշադրությունը հրավիրենք Ադրբեջանի ռազմականացված նոր քաղաքականության վրա, եւ նաեւ խնդրենք, որպեսզի միջազգային հանրությունը դեր խաղա այս այլեւս միջազգայնացած հարցի լուծումները գտնելու համար»:

«Ազգ»-ի այն հարցին, թե որքանով էին ԱՄՆ-ի լրատվության միջոցները նախապատրաստված նախագահ Լ. Տեր-Պետրոսյանի Ամերիկա կատարած այցին եւ զուտ ասիճանների իմաստով ինչքանո՞վ էր տեղին նախագահի հանդիպումը ԱՄՆ-ի արտգործնախարարի տեղակալի հետ, պրն. Հովհաննիսյանը պատասխանեց.

- Ես անձնապես նախագահի այցը համարում եմ հաջողությամբ պսակված: Այցի հիմնական նպատակը քաղաքական եւ առեւտրական երկկողմանի հարաբերություններ ընտեղծելն էր ԱՄՆ-ի եւ Կանադայի հետ: Մեծ չափով դա ստացվեց: Մենք այնտեղ չէինք գընացել ճանաչումը պնդելու համար, որովհետեւ գիտեինք, որ ԱՄՆ-ը եւ Կանադան մի փոքր կամաց են շարժվում այդ ուղղությամբ: Մեզ համար կարեւորը այդ շոուափելի ծրագրերի շուրջը բանակցելն էր:

Հաջողություն էր ոչ միայն ԱՄՆ-ի Երեւանում բացվելիք հյուպատոսարանը, այլ պայմանավորվեցինք, որ Ամերիկայի սննդի եւ բժշկական օգնությունը ուղղակի Հայաստան մտնի: Ամենակարեւորը՝ հրաման տվեց ԱՄՆ-ի Էքսպորտ-իմպորտ դրամատանը եւ մի այլ կազմակերպության՝ երաշխավորելու ամերիկյան ներդրումները Հայաստանում:

Ինչ վերաբերում է մամլո տեսություններին, չգիտեմ ձեր տեղեկությունները որտեղից են, սակայն կարող եմ ասել, որ բերեւս նախագահ Ելցինի նման ռեպորտաժներ չկան, բայց եւ հեռուստատեսությամբ, եւ ռադիոյով, եւ մի քանի թերթերում Հայաստանի հաշվին համենաս բավականին ռեպորտաժներ եղան: Կարող էին ավելին լինել, երբ որ Հայաստանն ունենա իր դեսպանատունը, իր մշտական ներկայացուցչությունը: Ինձ թվում է, մամուլի տեսակետից նույնպես բավարար էր: Անշուշտ, կարող ենք հարցումներ տալ, քննադատություններ անել, սակայն եթե հավաքված հոդվածների ընդհանուր պատկերին նայենք, շատ-շատ մեծ չէր մամլո տեսությունը, բայց ուր էլ որ գնացինք, մոտ 20 տեսսխցիկ կար, տարբեր տեսակի բդթակիցներ կային: Հաջորդ հանդիպումին ավելին պետք է լինի: Ինչ վերաբերում է Իգլբրգերի հետ հանդիպմանը, ըստ ԱՄՆ-ի արտաքին գործերի, երբ որ պետքարտուղար Բեյքերը բացակայում է երկրից (նա Չինաստանում էր), ինքը քարտուղարի պաշտոնակատարն է դառնում, եւ քանի որ Հայաստան-Ամերիկա հարաբերությունների ամրացման որոշ կոնկրետ հարցեր պետք է այդտեղ լուծվեին, մենք համարեցինք, որ կարեւորը աշխատանքի արդյունքն էր եւ ոչ թե ձեւականության պաշտոնությունը»:

Այնուհետեւ անդրադառնալով Հայաստան-Սփյուռք հարաբերություններին, նախարարը նշեց, թե «Հայաստանը անցյալում խաղացել է ոչ թե միացնող, այլ դառակտող դեր, եւ սփյուռքն էլ ինքն իր մեջ այդ դառակտումները առաջացրել է եւ ավելի խոստացել է, քան արել Հայաստանի վերածննդի համար: Եվ Հայաստանում, եւ սփյուռքում ամեն մեկն իր մեջ պետք է տեսնի Հայաստանի Հանրապետության երաշխիքը»:

Վերջում նախարարը անդրադարձավ նաեւ հայ-թուրքական հարաբերություններին, արտգործնախարարության հետագա գործունեությանը եւ ծրագրերին:

Հ. ՍԱՍՍՈՒՆԻ

Ու՞մ կհասնեն Մարկոսի միլիարդները

Ֆիլիպինների բռնապետ Ֆերդինանդ Մարկոսի այրու՝ գեղեցկության նախկին թագուհի Իմելդա Մարկոսի վերադարձը Մանիլա կարող է զգալիորեն արագացնել Մարկոսի կողմից յուրացված ազգային հարստությունների վերադարձման գործընթացը: Դրանց մի մասը՝ մոտ 500 միլիոն դոլլար, գտնվում է շվեյցարական բանկերում:

Շվեյցարիայի եւ Ֆիլիպինների իշխանությունների միջեւ արդեն հինգ տարի շարունակվող բանակցություններում վերջապես առաջխաղացում նկատվեց: Վերջերս Բեռնի որոշմամբ անցկացված հետաքննության բազմահատոր «դոսյեն» Շվեյցարիայի Ֆեդերալ դատարանը հանձնեց Ֆիլիպինյան կողմին:

35 գործերում հավաքված փաստաթղթերը եւ շվեյցարական բանկի տվյալները կհետաքննեն Ֆիլիպինյան կառավարության կողմից հանգուցյալ դիկտատորի ընտանիքի անդամների նկատմամբ մեղադրանքների ներկայացման գործը:

Քանի դեռ Ֆիլիպինցիները հետազոտում եւ ուսումնասիրում են Շվեյցարիայից ստացված փաստաթղթերը, Մարկոսի միջոցները բանկերում սառեցված կմնան: 1986 թ. փետրվարին, Մարկոսի բռնապետական ռեժիմի անկումից հետո, Ֆիլիպինյան կառավարության խնդրանքով Մարկոսի եւ նրա մտերիմների միջոցները շվեյցարական բանկերում սառեցվեցին, իսկ փաստաթղթերի սեյֆերը հայտարարվեցին անձեռնմխելի: Սակայն այդ որոշումն ընդունելու համար Շվեյցարիայի Ֆեդերալ խորհրդին պետք եղավ տասնհինգ օր: Ֆիլիպինների գլխավոր դատախազ Ֆ. Չավեսի կարծիքով, այդ երկար դադարը, ըստ երեւույթին, հնարավորություն տվեց Մարկոսի կլանի անդամներին Շվեյցարիայից դուրս բերել պահված միլիարդների հիմնական մասը: 1989 թ., Մարկոսի մահից հետո, կտակի հավակնություն ունեցող նրա 30 հարազատներ վարձեցին լավագույն փաստաբաններ մի ամբողջ բանակ, որպեսզի կարողանան նորից տիրել իրենց ունեցվածքին: Շվեյցարիայի Ֆեդերալ դատարանը իրեն ներկայացված պահանջը քննարկելուց հետո զգուշացրեց Մանիլային, որ Մարկոսի հարստությունը սառեցված կարող է մնալ մինչեւ ընթացիկ տարվա դեկտեմբերի քառորդը, եթե մինչեւ այդ ժամկետը Ֆիլիպինյան կառավարությունը չկարողանա Մարկոսի հարազատներին ծանրակշիռ մեղադրանքներ ներկայացնել պետական ունեցվածքի յուրացման համար: Այս ամսվա սկզբին Ֆիլիպինյան կառավարությունը Լոզանում գտնվող Ֆեդերալ դատարանին հանձնեց Իմելդա Մարկոսի դատական գործը՝ համապատասխան մեղադրանքներով: Այդ գործը ուսումնասիրելուց հետո շվեյցարական Ֆեդերալ դատարանը կտա իր եզրակացությունը, թե որքանով են ծանրակշիռ եւ հավաստի Իմելդա Մարկոսին ներկայացված մեղադրանքները, եւ ըստ այդմ էլ պարզ կլինի, թե ում են պատկանելու Մարկոսի միլիարդները: ■

Բորիս Պանկինը՝ Անգլիայում ԽՍՀՄ դեսպան

Ինչպես հաղորդեցին արտաքին հարաբերությունների նախարարությունում, Մեծ Բրիտանիայում ԽՍՀՄ նոր դեսպան Բորիս Պանկինը Լոնդոն կմեկնի մոտ օրերս: Նա համաձայնություն ստացավ այն բանից հետո, երբ ինքը Միխայիլ Գորբաչովը զանգահարել էր Ջոն Մեյջորին, որն իր հերթին խորհրդակցել էր թագուհու հետ:

Մեծ Բրիտանիայում ԽՍՀՄ դեսպանի դատը բավական էր վերջին ամսվա ընթացքում, ինչը արտաքին հարաբերությունների նախարարության երկրորդ եւրոպական վարչության աշխատակիցներից մեկն անվանել էր «ոչ բնականոն երեւույթ»:

Ավելի վաղ այդ պաշտոնը զբաղեցնող Լեոնիդ Զամյատինը քննադատության ենթարկվեց խորհրդության օրերին ընդունած դիրքի համար եւ հիմա դատապարտվում է բուռն գնալ:

Է. Շեւարդնաձեին արտաքին հարաբերությունների նախարար նշանակելով՝ Մ. Գորբաչովը Բ. Պանկինին առաջարկեց արտաքին քաղաքական հարցերով զբաղվող դեսպանների խորհրդականի պաշտոնը: Սակայն նախկին նախարարն ընտրեց Լոնդոնը, պարզաբանելով, որ «միշտ գերադասել է աշխատել իմքնուրույն տեղամասերում»: ■

Կուբան բանակցում է հանրապետությունների հետ

Կուբայի արտաքին առեւտրի նախարար Ռիկարդո Կաբրիասը այցելել է նախկին ԽՍՀՄ-ի ինքնիշխան հանրապետությունները՝ համագործակցության պայմանագրեր կնքելու նպատակով: Նա արդեն հանդիպել է մերձբալթյան երկրների եւ Ռուսաստանի ղեկավարների հետ:

«Դիվանագիտական համայնապատկեր»-ին հաջողվեց ստանալ տեղեկություն, ըստ որի Ռիկարդո Կաբրիասի այցն անցնում է որոշակի գաղտնի մթնոլորտում եւ չունի կոնկրետ երթուղի ու ավարտի ժամկետ: Ենթադրվում է, որ նախարարը գտնվում է «ազատ որոնման» մեջ, հաջորդ կանգառի վայրը կախված է նախորդ հանրապետությունում տեղի ունեցած բանակցություններից: Հաշվի առնելով այն, որ հաջորդ տարի ինչպես տեխնիկական, այնպես էլ քաղաքական պատճառներով Ռուսաստանը հազիվ թե կարողանա բավարարել Կուբայի նավթի պահանջները, Հավանայի էմիսարը կաշխատի լրացնել պակասը մի շարք այլ հանրապետությունների հաշվին՝ Ղազախստանի, Ուզբեկստանի կամ Ադրբեջանի: Հաշվարկները, հավանաբար, հիմնվում են այն բանի վրա, որ այդ հանրապետությունների վերաբերմունքը Ֆիդել Կաստրոյի ռեժիմի նկատմամբ կարող է այնքան էլ հակառակական չլինել, ինչպես Ռուսաստանի ղեկավարներինը: ■

Պաղեստինի պատվիրակությունը Մոսկվայում

Միջին Արեւելքի խնդրի կարգավորման գործընթացը բեւեռոխում է *«ամենադժվար փուլը, երբ անհրաժեշտ է սկսել միջազգային համաժողովի մասնակիցների երկկողմանի, իսկ հետո բազմակողմանի հանդիպումներ»*. Պաղեստինի պատվիրակության հետ հանդիպումից հետո հայտարարեց ԽՍՀՄ արտաքին հարաբերությունների նախարար Էդուարդ Շեւարդնաձեն:

Երկկողմանի բանակցություններ սկսելու ժամկետը, Է. Շեւարդնաձեի խոսքերով, կորոշվի արաբական եւ իսրայելական կողմերի համաձայնությունից հետո: *«Նախատեսվում է խորհրդակցությունների եւս մեկ փուլ, սակայն կարելի է ասել, որ գործընթացը շարունակվում է»*, նշեց խորհրդային նախարարը:

Իսրայելի կողմից զավթված տարածքների արաբական բնակչությունը ներկայացնող Պաղեստինի պատվիրակության անդամ Ֆեյսալ Հուսեյնին հույս հայտնեց, որ ԽՍՀՄ-ն ամբողջությամբ կկատարի այդ առաքելությունը: Այդ կողմակցությամբ դրական դեր է խաղում, նրա կարծիքով, Է. Շեւարդնաձեի վերադարձը: ■

«Կանադան կհարգի ուկրաինական ժողովրդի դեմոկրատական ընտրությունը եւ կճանաչի նոր պետության անկախությունը, եթե դրան կողմ քվեարկի բնակչությունը դեկտեմբերի 1-ին կայանալիք հանրաքվեի ժամանակ», այսպիսի հաղորդագրություն եր հրապարակել Ուկրաինայի արտգործնախարարության մամլո ծառայությունը՝ վկայակոչելով Կանադայի արտգործնախարար Բարբարա Մակդուգալին: Բարբարա Մակդուգալը հայտարարել է, որ Կանադան ցանկանում է ունենալ Ուկրաինայի երաշխիքները մի շարք հարցերի, մասնավորապես՝ միջուկային զինանոցի օգտագործման, բանակի ստեղծման եւ էթնիկական փոքրամասնությունների իրավունքների ապահովման վերաբերյալ: ■

Բելառուսի հանրապետության նախարարների խորհուրդը կարգադրեց փակել ԽՍՀՄ-ի արտաքին տնտեսական բանկում գտնվող Բելառուսի բոլոր իրավական դեմքերի հաշվեկշռային վայրուսային հաշիվները: Հիմա Բելառուսի միավորումների, ձեռնարկությունների եւ կազմակերպությունների ղեկավարները պետք է երկու շաբաթվա ընթացքում վայրուսային հաշիվներ բացեն Բելառուսի արտաքին բանկում եւ այնտեղ փոխադրեն միութենական բանկում գտնվող իրենց դրամը: ■

Մոլդովայի տարածքում գտնվող ԽՍՀՄ-ի զինյալ ուժերի ունեցվածքի ազգայնացման մասին վերջնական որոշում կընդունվի Միության պաշտպանության նախարարի հետ բանակցություններից հետո: Այդ մասին նոյեմբերի 25-ին հայտարարվեց Մոլդովայի վարչապետ Վալերի Մուրավսկու մոտ տեղի ունեցած խորհրդակցությունում, Օդեսայի զինվորական օկրուգի հրամանատարության ներկայացուցիչների մասնակցությամբ: ■

Ելույթ ունենալով Ֆրանսիայի ձեռնարկատերերի խորհրդային Միությունում կատարած այցին նվիրված մամլո ասուլիսում, ԽՍՀՄ գիտատեխնիկական միության գլխավոր տնօրենի տեղակալ Բորիս Կուռակինը լրագրողներին հաղորդեց, որ ԽՍՀՄ Պետբանկում Ֆրանսիացիներին տեղեկացրել էին նոր նմուշի թղթադրամ շրջանառության մեջ մտցնելու նախապատրաստման մասին: ■

Baltfax

Նոյեմբերի 24-ին ելույթ ունենալով հանրապետական հեռուստատեսությամբ, Լիտվայի Գերագույն խորհրդի նախագահ Վ. Լանդսբերգիսն ասաց, որ Լիտվայում առանց իշխանություններին նախօրոք տեղյակ պահելու շարունակվում է ռազմական տեխնիկայի տեղաշարժը, հայտնվում են նոր դեսանտային ստորաբաժանումներ:

Լանդսբերգիսը մտահոգություն հայտնեց, որ խորհրդային զինվորականները իշխանություններին չեն հանձնում իրենց գույքն ու սպառազինությունները: **«Մենք պարտավոր ենք ինչքան հնարավոր է արագ հրամանագիր կամ օրենք ընդունել, որով հանցագործություն կհամարվի խորհրդային բանակի սպառազինությունների հանձնումը կամ վաճառքը որեւէ մեկին, բացի Լիտվայի կառավարությունից»**: Դրա հետ մեկտեղ նա նշեց, որ «դուրս է վաճառվում» ամենաավերիչ եւ մահաբեր ուժի զենքը:

Լանդսբերգիսի կարծիքով, **«ոչ թե բնակարանների խնդիրն էր խանգարում սկսել Լիտվայից խորհրդային բանակի դուրս հանումը, այլ ավելի շատ՝ խոովարար բնույթի ծրագրերի առկայությունը»**: ■

Լիտվայի Գերագույն խորհրդի նախագահի տեղակալ Կազիմիրաս Մոտեկան, ելույթ ունենալով հանրապետական ռադիոյով, ասաց, որ **«պատգամավոր Վ. Չեպայտիսի գործունեությունը եւ ՊԱԿ-ի հետ կապերը գնահատելու համար անհրաժեշտություն չկա պահանջել ազգենտուրային գործը»**: Նրա խոսքերով, խորհրդարանը իր տրամադրության տակ ունի բավական ճանակությամբ նյութեր: **«Իսկ եթե խոցվենք որոնումների մեջ, կամ կկորչենք ճանապարհին, կամ էլ երկար կփնտրենք»**, հայտարարեց Կ. Մոտեկան: ■

Նոյեմբերի 24-ին վարչապետ Գեդիմինաս Վագնորյուսը «Մեծ յոթնյակի» խորհրդի նախագահ Նորբերտ Տակեսիտայի հրավերով մեկնեց Տոկիո: «Մեծ յոթնյակի» խորհրդի առաջիկա նստաշրջանի ժամանակ կքննարկվեն Արեւելյան Եւրոպայի բարեփոխումների արագացման հնարավորությունները, խորհրդային Միությունում եւ Բալթյան երկրներում ստեղծված իրավիճակը: ■

Կանադայի լատիշների ազգային միությունը առաջարկեց իր օտարերկրյա կազմակերպություններին վերահսկել Լատվիա առաքվող դեղորայքն ու սննդամթերքը: Դա կապված է այն բանի հետ, որ շուտով Լատվիայի ծերերի եւ տկարների համար կուղարկվի 40 հազար դոլլարի սննդամթերք, ինչպես նաեւ դեղամիջոցներ, որոնք ձեռք են բերվել Տորոնտո քաղաքի կառավարության կողմից հատկացված 25 հազար դոլլարով: ■

digitised by A.R.A.R.@

Հանրաքվեի նախագահի այցը Վաշինգտոն եւ Օսլավա միանշանակ չընդունվեց Հայաստանում եւ սփյուռքում, հատկապես Մ. Նահանգներում, որտեղ քաղաքական տարբեր շրջանակներ հարց են տալիս, թե արդյոք կանխահա՞ս չէր այդ այցը, թե ծի՞շտ էր ընտրված պահը՝ նկատի ունենալով Գորբաչով-Մութալիբով վերաշխուժացած առանցքն ու նույնինքն ամերիկյան ներքին իրավիճակը, եւ կամ՝ լավ նախապատրաստվա՞ծ էր այն քաղաքական, տնտեսական, տեղեկատվական եւ քարոզչական տեսակետից: Անշուշտ, մյուս կողմից, շեշտվում է նաեւ հանրաքվեի նախագահի առաջին պաշտոնական այցի ձեռքբերումները, միջազգային ուղղակի հարաբերություններ հաստատելու եւ նախկին Խ. Միության այս ծայրամասային հանրապետությունը ամեն ձեւի մեկուսացումից դուրս բերելու իմաստով այդ այցի կարեւորությունը: Սակայն, այս բոլորի առկայությունը պահանջում է քաղաքական լուրջ հաշվեկշիռ ու վերլուծում, որի փորձին է ձգտում կատարել ՈԱԿի Բոստոնի պաշտոնաթերթը:

Հաշուեկշիռ. Նախագահ Տեր-Պետրոսեանի Միացեալ Նահանգներ Բ այցելութեան առթիւ

Իր արտասանած սահմանադրական ուխտին արձագանքները Հայաստանի խորհրդարանի մէջ դեռ ամբողջովին չմարած. Հայաստանի Հանրապետութեան ազգընտիր նախագահը Լեւոն Տեր-Պետրոսեան ճամբայ ելաւ դէպի Միացեալ Նահանգներ: Նման շտապ ճամբորդութեան մը անհրաժեշտութիւնը նորընտիր նախագահի մը կրնայ պարտադրել միայն երկրին օրհասական կացութիւնը եւ անոր անմիջական ելք մը գտնելու առելի կամ նուազ աղտոտով յոյսը:

Վերջին շրջանին ամէն ինչ գէջ կ'ընթանայ արդէն իսկ աննախանձելի կացութեան մը մէջ գտնուող Հայաստանի համար: Քոռնիֆ ցաւերուն վրայ կ'աւելնան նոր վէրքեր: Հայաստան կը տառապի նախկին Խորհրդային Միութեան հանրապետութիւններուն յատուկ ընդհանուր տնտեսական տագնապէն: Ամբողջական սնանկութեան մէջ կը գտնուի կազմալուծուած Միութիւնը, որուն կեդրոնական դրամական արկղներուն մէջ 1953-ին գտնուող պահեստի 2.053 բոն ոսկին այժմ վերածուած է 240 բոնի, դէպի գերծ բոն արընթաց վայրէջքով: Իսկ ռուբլին միայն անվստահութիւն կը ներշնչէ. բոլոր այն հանրապետութիւնները, որոնք հետամուտ են իրենց ազգային դրամագիրը ունենալու, առաստաղն ռուբլի կը ծախսեն անհրաժեշտ գնումները կատարելու: Հանրապետութիւններու միջեւ իրերայաջորդ տնտեսական համաձայնագիրները կ'ունենան վարդի մը կեանք: Ամէն հանրապետութիւն պէտք ունի յենուելու միւսին, սակայն նաեւ կը դժուարանայ փոխադարձ վստահութիւնը: Տիրող այս ընդհանուր ժխորին մէջ, զոր կարելի է բաղդատել միայն Բաբելոնի աշտարակի հետ, ամէն հանրապետութիւն կը փնտռէ իր գլխուն ճարը եւ ափ կ'առնէ այն դոնները, որոնցմէ կը յուսայ օգնութիւն ստանալ: Զարմանալի պիտի չթլլար նաեւ, որ այս իրարանցումին մէջ գործին սխալներ, մոլորումներ, որոնցմէ ոմանց գինը կրնայ շատ բարձր ելլալ, մանաւանդ փոքրիկ, անդաշտան հանրապետութիւններուն համար:

Հայաստան առելի մտահոգիչ դպակեր մը կը դարձէ ծանօթ դատճառներով. 800.000 գաղթական եւ տնազուրկ, երկրաշարժէն կիսաւեր երկիր, Արցախի հարց, եւ բենզինի դրացի մը, որուն ծրագիրն է ոչ միայն տեղահան ընել իր դարաւոր հողերուն, իր հարազա՛տ հայրենի հողին վրայ աղտոտ արցախահայութիւնը, այլ նաեւ ախորժակներ ունի ներկայ 29.000 քառակուսի կիլոմետր տարածութիւն ունեցող փոքր Հայաստանի հողամասին այն շերտին նկատմամբ, որ կը բաժնէ Ադրբեջանը Նախիջեւանէն: Այս դատճառով նաեւ Հայաստան այսօր կը գտնուի մութին մէջ, գործարանները չեն բանիր, տուներուն դպատերը չեն տաքնար [illegible] ոչ միայն կը դպակի նա[illegible] ազգը ո-

Լուսանկարը՝ Դաւիթ ՋԵՆՅՍԻՆ

Լեւոն Տեր-Պետրոսեան եւ իր արտաքին գործոց երիտասարդ փոխնախարարը՝ Ռաֆֆի Յովհաննէսեան. շատ յոյսեր կապեր էին, որ Վաշինգտոն պիտի ճանչնայ Հայաստանի անկախութիւնը: Ասիկա փոքր մը զարմանալի լաւատեսութիւն կը թուի ելլալ, մանաւանդ արտաքին գործոց փոխնախարարի կողմէ, որ ամերիկահայ մըն է եւ որուն լաւածանօթ պէտք է եղած ելլար Վաշինգտոնի արտաքին քաղաքականութիւնը: Դէպի Ամերիկա իր ճամբուն վրայ, Մոսկուայի մէջ, Յովհաննէսեան կը յայտարարէր *«Վերջնականօրէն, (Վաշինգտոն) այցելութենէ ետք, Միացեալ Նահանգներ պիտի ճանչնայ Հայաստանը»*, բեւ զգուշաւորութեամբ կ'աւելցնէր *«Որքա՞ն յետոյ չեմ գիտեր»*: Միացեալ Նահանգներու մէջ նոյն լաւատեսութիւնը ցոյց կուտար Յովհաննէսեան, մեզի համար միշտ անբացատրելի պատճառներով, մինչդեռ, հայրենի պատասխանատուներու դեռ Հայաստան գտնուած միջոցին, Վաշինգտոն անուղղակի՝ սակայն յստակ պատգամ մը ղրկած էր Երեւանի ուղղութեամբ իր մէկ անձնաւորութեան կողմէ: Նախագահ Բուշ ազգային աղտոտութեան հարցերու խորհրդական Բրենդ Սքոքրոֆթ, ի պատասխան 104 կոնգրէսականներու Սոֆեակ տան ղրկած նամակին, որ կը խնդրէր Հայաստանի ճանաչումը, կը գրէր. *«Կը հաւատանք, թէ կանխահաս է Հայաստանի անկախութիւնը – եւ կամ ուրիշ հանրապետութեան անկախութեան ճանաչումը, երբ դեռեւս (Խորհրդային) Միութիւնը եւ հանրապետութիւնները կը գտնուին իշխանութեանց բաժանման նոր յարաբերութեանց գործընթացին մէջ»*: Երբ նկատի առնենք, թէ Վաշինգտոն ինչ պայմաններու տակ բարեհաճեցաւ ճանչնալ Բալթեան երկրներու անկախութիւնը, այն ատեն կրնանք հաստատել, թէ ինչո՞ւ Վաշինգտոն այժմ չճանչցաւ եւ պիտի չճանչնայ Հայաստանը. նկատի առնելով 12 հանրապետութիւններուն, ի մասնաւորի Ռուսիոյ կերպարանափոխումը եւ անոր դիրքը՝ հանրապետութիւններու ճանաչման հարցով: Պէտք չէ մոռնալ, որ դեռ նոյնիսկ Ելցին չէ ճանչցած Հայաստանի անկախութիւնը: Կարճ՝ Վաշինգտոն կրնայ երկու ամիսէն կամ... քանի տարիէն ճանչնալ Երեւանը, համաձայ տիրող քաղաքական վերիվայրումներուն: Հայաստանի ուղղակի օժանդակութեան մերժումը մէկ տարբեր արտայայտութիւնն է ամերիկեան յստակ եւ հետեւողական քաղաքականութեան:

Եթէ Տեր-Պետրոսեան Ջորջ Բուշէն չստացաւ իր հիմնական ակնկալածը, այսուհանդերձ Հայաստանի նախագահին ճամբորդութիւնը արձանագրեց կարգ մը շահեկան կէտեր: Առաջին անգամն է, որ Հայաստանի նախագահը պաշտօնական հանդիպում կ'ունենար Միացեալ Նահանգներու նախագահին հետ: Հանդիպումը ձեւական բնոյթ չունէր: Վաշինգտոն-Երեւան կապեր հաստատեցան, որոնք պիտի զօրանան եւ ամրանան: Ամերիկա պիտի բաջալերէ ամերիկեան դրամագլուխի ներդրումը եւ առեւտուրը, ու պիտի աշխատի բժշկական եւ այլ օժանդակութիւն հասցնել Հայաստան: Peace Corps-ի կամաւորները պիտի երթան սատարելու համար ընկերային, առողջապահական, տնտեսական վերականգնումի աշխատանքներուն: Արցախի խնդիրը աւելի այժմէականացաւ որպէս մարդկային իրաւանց հարց, որ պէտք է արժանանայ միջազգային ուշադրութեան: Յառաջիկայ տարի հիւպատոսարան մը պիտի բացուի Երեւանի մէջ, որ պիտի դառնայ ամերիկեան առաջին պաշտօնական ներկայութիւնը Կովկասի մէջ, Հայաստանի մայրաքաղաքն ծառայելով Ադրբեջանի եւ Վրաստանի: Յատկանշական է այս պարագան, որովհետեւ Ամերիկա այս կերպով յայտնած կ'ըլլայ, թէ Հայաստան միակն է այդ հանրապետութիւններուն մէջ ռամկավարութեան յարողը եւ ամէնէն կայունը քաղաքականօրէն: Հայաստան վստահօրէն պիտի օգտուի նաեւ Կանադայէն, որուն վարչապետին հետ եւս տեսակցեցաւ Տեր-Պետրոսեան: Եւ Հայաստան օգնութեան կարիքը ունի ամէն մարզերու մէջ:

Լեւոն Տեր-Պետրոսեան վայելեց յարգանք եւ համակրանք, որպէս բոնապետութենէ մը դէպի ամբողջական ռամկավարութիւն ընթացած հանրապետութեան մը համաժողովրդական առաջնորդը, որ նոյնիսկ իր երկրին անկախութեան գործընթացը յառաջ տարաւ յարգելով Միութեան սահմանադրութիւնը: Մենք վստահ ենք որ, ինչպէս իր առաջին այցելութենէն ետք, նոյնպէս հիմա ան պիտի գիտնայ հաղել անհրաժեշտ դասերը Հայաստանի քաղաքականութեան ճշգրիտ ձեւաւորման ներկայ փափուկ փուլին մէջ: Կշռադատութիւնը որքան գիտական մտքի, նոյնքան նաեւ փորձառութեանց արգասիքն է: Հայաստանի նախագահը որպէս ռեալփոլիթիքով առաջնորդուող ղեկավար՝ անդայմանօրէն պիտի յանգի իրապէս եզրակացութիւններու: Արեւմուտքը այժմ կուտայ այնքան՝ որքան որ կրնայ տալ, եւ որքան որ տալիքը չի վնասեր իր շահերուն: Հայաստան եթէ մէկ ձեռքը պիտի երկարէ դէպի Արեւմուտք, միւսով ամրապէս պէտք է բռնէ Ռուսիոյ ձեռքը, առանց որուն օժանդակութեան Հայաստանի ձմեռը պիտի դառնայ աւելի ցուրտ եւ սահմանային աղտոտութիւնը՝ աւելի դիւրաբեկ:

Հայրենիքի օրհասական ժամերուն է նաեւ, որ հրամայական կը դառնայ ազգային համախումբ եւ ծրագրովի աշխատանքը: Օսլայի մէջ նախագահ Տեր-Պետրոսեան իր խօսքը ուղղելով հայ կազմակերպութիւններու ներկայացուցիչներուն ըսած է, թէ սփիւռքի հայերը *«Հայաստանը նկատելու են իրենց սեփական ու հարազատ հայրենիքը, որուն քաղաքացիները պիտի դառնան ժուռով»*:

Արժանի ելլանք քաղաքացիները ելլալու երկրի մը, հայրենիքի մը, որ աւելի քան երբեք պէտք ունի մեր հարազատ աշխատանքին – բարոյական, իմացական եւ նիւթական:

Խմբագրական «Պայքար»ի 23 Նոյեմբեր 1991

Թուրքիան ճանաչել է Ադրբեջանի անկախությունը.

Ինչո՞վ է դա պայմանավորված

Հարցը պարզելու համար «Իզվեստիա»ի թղթակիցը դիմեց ԽՍՀՄ-ում Թուրքիայի արտակարգ լիազոր դեսպան Վոլքան Վուրալին:

- Այդպիսի որոշում ընդունելիս իմ երկրի կառավարությունն առաջնորդվել է առաջին հերթին Խորհրդային Միության ժողովրդական պատգամավորների վերջին համագումարի ընդունած փաստաթղթով: Նրանում, ինչպես հայտնի է, գրված է, որ իրենց անկախությունը հայտարարած բոլոր հանրապետություններն այսուհետեւ առաջնորդվելու են միջազգային իրավունքներով, եւ նրանց ինքնիշխանությունը կարող է ճանաչվել ցանկացած արտասահմանյան երկրի կողմից: Այնպես որ, ապօրինի ոչինչ չի արվել:

Իսկ Ադրբեջանի անկախության ճանաչումն ընթացել է հետեւյալ կերպ. այդ հանրապետության խորհրդարանը հոկտեմբերի 29-ին հայտարարեց միջազգային համագործակցության անդամ դառնալու իր որոշման մասին եւ դիմեց աշխարհի բոլոր պետություններին իր անկախությունը ճանաչելու խնդրանքով: Նոյեմբերի 3-ին Բաքվի մեր հյուպատոսությունում ստացվեց Ադրբեջանի արտգործնախարարության նոտան, որով նրանք խնդրում էին ճանաչել հանրապետության անկախությունը: եւ վերջապես, Անկարա կատարած իր այցի ժամանակ վարչապետ Հասանովը կրկնեց այդ խնդրանքը:

Մեր կառավարությունը, հիմնվելով հնուց եկող մշակութային եւ լեզվական կապերի վրա՝ Թուրքիայի համար այդ եղբայրական հանրապետության հետ, եւ հաշվի առնելով ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների վերջին համագումարի որոշումները, հայտարարեց Ադրբեջանի անկախության ճանաչման մասին:

- Բայց դա ավելի չի՞ բորբոքի Լեռնային Ղարաբաղի անվերջանալի պատերազմը:

- Իհարկե, ոչ: Ճանաչելով մեր հարեւան հանրապետության ինքնիշխանությունը, մենք միաժամանակ չենք միջամտում ցանկացած անկախ հանրապետության ներքին գործերին: Դեռ ավելին, մենք մտադիր ենք հետագայում համագործակցել Ուկրաինայի, Հայաստանի, Մոլդովայի եւ Վրաստանի հետ:

- Նշանակում է, եթե, օրինակ, վաղը Հայաստանը դիմի Թուրքիային նման խնդրանքով, ապա ձեր կառավարությունը կբավարարի՞ այդ խնդրանքը:

- Անտարակույս: Բանն այն է, որ Ադրբեջանից բացի մեզ առայժմ ոչ ոք այդպիսի խնդրանքով չի դիմել: եւ քանի որ մենք խոսեցինք Հայաստանի մասին, ապա ընթերցողներին կը հետաքրքրի, որ Թուրքիան պատրաստվում է հյուպատոսարան բացել Երեւանում: Դա մի ավելորդ անգամ հաստատում է մեր անկեղծությունն ու անկողմնակալությունը հարեւան հանրապետությունների նկատմամբ:

- Շատ բարի: Թուրքիան ընդունում է, որ Ադրբեջանն անկախ, ինքնիշխան պետություն է: Իսկ եթե հանկարծ մի որոշ ժամանակ անց Բաքուն դիմի ձեզ զենք վաճառելու խնդրանքով...

- Իհարկե, մենք այդպիսի խնդրանքը բավարարել չենք կարող, թեկուզ այն պատճառով, որ Անկարայում շատ լավ հասկանում են, թե ուր է ուղղվելու այդ զենքը: եւ ընդհանրապես, իմ երկիրը ձգտում է նրան, որպեսզի ցանկացած կոնֆլիկտ լուծվի խաղաղ ճանապարհով: Բացի դրանից, վերջերս ընդունվել է Թուրքիայի զինված ուժերի կրկնակի կրճատման վերաբերյալ նոր որոշում:

- Եւ վերջին հարցը, պարոն դեսպան: Ի՞նչ է լինելու այն մի քանի հազար մարդկանց հետ, որոնք Նախիջեւանից անլեգալ անցել են Թուրքիա:

- Նրանց վերադարձել են հայրենիք:

Վ. ԽՍԱՐՍՏՈՒՀՈՒ

Խորհրդային Միության դեսպանատները փակվում են

Ինչպես հայտնի դարձավ իրազեկ աղբյուրներից, տնտեսման նպատակներով փակման ենթակա ԽՍՀՄ-ի մոտ 10 դեսպանատներն ու գլխավոր հյուպատոսարանները հիմնականում գտնվում են այն երկրներում, ուր ներկայացուցիչները շենքերը վարձակալում են, այսինքն ԽՍՀՄ-ի սեփականությունը չեն: Արտաքին հարաբերությունների նախարարությունում /խուսափում են պատասխանել այն հարցին, թե կոնկրետ որ երկրների մասին է խոսքը, քանի որ բարձրաստիճան խորհրդային ղեկավարությունը դեռ չի հաստատել համապատասխան ցուցակը: Սակայն, որոշ տվյալներով, ցուցակում հիմնականում «երրորդ աշխարհի» մայրցամաքներից մեկում գտնվող խորհրդային ներկայացուցչություններն են:

digitised by A.R.A.R.@

Հայաստանի խնդիրը եւ Դեմիրելի կառավարությունը

Վաշինգտոնում «Յուրիյեթ»ի թղթակից Սեդաթ ԷՐԳԻՆԸ բացառապես գրում է թուրք-ամերիկյան փոխհարաբերությունների մասին՝ հաճախակի անդրադառնալով Թուրքիայի քաղաքական կյանքում կարեւոր նշանակություն ունեցող իրադարձությունների վաշինգտոնյան արձագանքներին: Թերթի նոյեմբերի 15-ի համարում հրապարակված «*Հայաստանի խնդիրը եւ Դեմիրելի կառավարությունը*» խորագիրը կրող հոդվածում հեղինակը ԱՄՆ-ի հետ Հայաստանի մերձեցման հնարավորությունները գնահատում է որպես վտանգավոր երեւույթ Թուրքիայի շահերի համար եւ հայ-թուրքական փոխհարաբերությունների հարցում զգոնության կոչ է անում իշխանության գլուխ եկած նոր կառավարությանը: Հեղինակի կողմից յուրովի են գնահատվում Լեւոն Տեր-Պետրոսյանի գործունեությունը, Բաֆֆի Հովհաննիսյանի նշանակումը արտգործնախարարի պաշտոնակատար եւ ԱՄՆ-ում ժիրայր Լիպարիտյանի պահանջատիրության հետ կապված հայտարարությունները: Նկատի ունենալով երգինի հոդվածի հետաքրքրականությունը, այն ամբողջությամբ ներայացնում ենք ընթերցողի ուշադրությանը:

Է. Հ.

Վերջերս Նյու-Յորքում կազմակերպված թուրք-ամերիկյան գործարար շրջանների խորհրդակցության ընթացքում ամերիկացի մի երիտասարդ, որը թուրք բիզնեսմեն Իշխակ Ալթոնի կողմից գրեթե չէր հետաքրքրվում, գրավում էր բոլորի ուշադրությունը: Երիտասարդը Վան Գրիգորյանն էր:

Ամերիկայի Հայկական համագումարի իրավաբանական գործերի կառավարիչ Գրիգորյանը Վաշինգտոնի թուրքական շրջաններին քաջ հայտնի է կոնգրեսի միջանցքներից: Դեռ չի մոռացվել, թե ինչպես հակաթուրքական գործունեության ակտիվիստ Վան Գրիգորյանը սենսացիա հայկական բանաձեւի քննարկման ժամանակ բռնամական բազմաթիվ արտահայտություններ էր շոյտում թուրք դիվանագետների երեսին եւ գայրույթով ասում. «*Մենք ձեզ դեռ ցույց կտանք*»:

Անցյալում Թուրքիայի հանդեպ բացահայտ բռնամական դիրքորոշում ունեցող հայկական լոբբին ինչքանո՞վ է անկեղծ Թուրքիայի հետ մերձեցման ուղղությամբ դրսեւորվող ջանքերի մեջ: Այս հարցը վերաբերում է նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին: Տեր-Պետրոսյանը վերջին շրջանում «*ծիրատոտի ծյուղ է մեկնում*» Թուրքիային եւ մեր երկրի հետ լավ հարաբերություններ հաստատելու ազդանշաններ է տալիս:

Չնայած ջերմ ելույթների առկայությանը, անհրաժեշտ է այնուամենայնիվ նշել, որ Հայաստանի Հանրապետության ղեկավարության կողմից արված հայտարարություններում մենք չենք հանդիպում Թուրքիայի դեմ ուղղված պահանջատիրությունից հրաժարվելու վերաբերյալ արտահայտությունների: Ընդհակառակը, այդ հայտարարությունները գալիս են հաստատելու, որ ղեկավարությունը պահանջատիրության գաղափարից նահանջելու մտադրություններ ամենեւին չունի: Օրինակ, սեպտեմբերի 8-ին Մոսկվայում Լեւոն Տեր-Պետրոսյանը, հանդես գալով ամերիկյան հանձնախմբի առաջ, նշեց. «*Հեղափոխության ճանաչման համար համաշխարհային հանրությանը արված կոչը հայ ժողովրդի արդարության պահանջն է*»:

Տեր-Պետրոսյանի խորհրդականներից Հայաստանի խորհրդարանի իրազեկման եւ վերլուծական կենտրոնի տնօրեն Ժիրայր Լիպարիտյանը հոկտեմբերի 30-ին Բոստոնում ունեցած իր ելույթում ասաց. «*Մեր կառավարությունը մտադիր չէ զիջել ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ գործադրվող ջանքերից հրաժարվելու վերաբերյալ որեւէ պահանջի առաջ*»: Այնուհետեւ նա տեղեկացրեց, որ «*Հայաստանի կառավարությունը մերժել է պահանջատիրությունից հրաժարվելու վերաբերյալ թուրքական կառավարության դիմումը*»:

Նման կարգի օրինակները բազմաթիվ են: Սակայն վերոհիշյալ մեջբերումներն անգամ բավական են համոզվելու, որ Հայաստանի ղեկավարների քարեկամական բնույթի ելույթները ներկա շրջանում տակտիկական քայլերի բնույթ են կրում: Նրանց մոտեցումը ոչ այլ ինչ է, եթե ոչ «*իրատես քաղաքականությունից*» բխող անհրաժեշտություն: Հայաստանի համար Թուրքիան դեռի Արեւմուտք դուռ գալու միակ պատուհանն է: Բնական է, որ երիտասարդ հանրապետությունը, որ դեռ չի էլ հասցրել լուծել միջազգային ճանաչման խնդիրն իր համար, Թուրքիայի դեմ դիրքեր գրավելով ոչինչ չի կարող շահել:

Սակայն, հետագայում, երբ Հայաստանը ուժի գա, արժանանա միջազգային հանրության ճանաչմանը եւ արտաքին աշխարհում դաշնակիցներ ձեռք բերի, ամենայն հավանականությամբ այլեւս չի խուսափի բացել հին թղթածրարները դրանք Թուրքիայի դեմ օգտագործելու համար: Հատկանշական է Տեր-Պետրոսյանի անցյալ տարվա դեկտեմբերի ելույթը, որն իր արտահայտությունն էր գտել «Armenian Reporter» թերթում: Ելույթում նա ասում էր. «*Հայ դատն ու հայկական դատանջությունը գտնվում են մեր նոր հանրապետության օրակարգում: Սակայն հանրապետությունը այդ կարող է բարձրացնել այն ժամանակ, երբ ինքը ի վիճակի կլինի սեփական ջանքերով եւ իր հնարավորություններով լուծել դրանք*»:

Այդ առումով խիստ կարեւոր է նաեւ Լեւոն Տեր-Պետրոսյանի կողմից ծագումով հայ, ԱՄՆ-ի քաղաքացի, Ամերիկայում Հայկական համագումարի ղեկավարներից Բաֆֆի Հովհաննիսյանի արտգործնախարարի պաշտոնում նշանակվելը: Սա ցույց է տալիս, թե ինչպես Հայաստանը արտաքին քաղաքականության մեջ առաջնային տեղը հատկացնում է ԱՄՆ-ին: Դրա հետ կապված մասնակիորեն կարելի է նաեւ պնդել, թե Հայաստանը արտաքին հարաբերություններում ուղղակիորեն Ամերիկայի հետ է կապված:

Այս ամենից պարզ երեւում է, որ Հայաստանի Հանրապետությունը որոշակիորեն ընդօրինակելու է Իսրայելի մոդելը: Ելնելով տնտեսական սահմանափակ հնարավորություններից՝ Հայաստանը գլխավորապես սփյուռքի եւ Արեւմուտքի վրա հենվելու փորձեր է կատարելու եւ երկար ժամանակ իր փոխհարաբերությունները Թուրքիայի հետ կարգավորելու է Վաշինգտոնի միջոցով, ամերիկյան վարչակարգը, Կոնգրեսն ու Ամերիկայում հայկական լոբբին ուղղելու է Թուրքիայի դեմ այնպես, ինչպես անում է Հունաստանը: Վերջինս Թուրքիայի հետ փոխհարաբերություններում դրական արդյունքի հասնելու համար Ամերիկյան կոնգրեսի հունական լոբբին օգտագործում է որպես Անկարայի վրա ճնշում գործադրելու միջոց:

Այս ամենի լույսի տակ Հայաստանի Հանրապետության հետ փոխհարաբերությունների սկզբնավորման ներկա փուլում զգուշավորությունը անհրաժեշտություն է դառնում: Օգտակար կլինի ճանաչարհի դեռ սկզբին լրջորեն բացատրել Հայաստանի ղեկավարությանը բարիդրացիական հարաբերությունների կանոնները: Առաջինը, պահաջել Հայաստանի ղեկավարությունից, որ պարզորոշ կերպով Թուրքիայի դեմ ուղղված պահանջատիրությունից հրաժարվելու մասին հայտարարություն անի: Բացի դրանից, երաշխիքներով պետք է վստահեցնել, որ Հայաստանը զերծ կմնա Թուրքիայի շահերին հակասող գործողություններից եւ ամեն կերպ կչեզոքացնի հայկական լոբբիի հակաթուրքական գործունեությունն սփյուռքում:

Սրանք այն նախադայմաններն են, որոնք եթե ոչ այսօր, առնվազն հեռագայում բոլորովին անհնար են դարձնելու: Թուրքիան չէ, որ Հայաստանի հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության առաջ է կանգնած: Ընդհակառակը, նման խնդիր ունեն հենց հայերը: Ընդ որում, Թուրքիայի աջակցությունը Հայաստանի տնտեսությունից կենսական անհրաժեշտություն է: Նոր կառավարությունը, որ ստանձնում է երկրում գործադիր իշխանությունների ֆունկցիան, Հայաստանի հետ փոխհարաբերություններում, ըստ երեւույթին, նկատի կունենա վերոհիշյալ դիտողությունները:

Ելցինը սայթաքում է Չեչենա-Ինգուշեթիայի հարցում

Վերջերս արեւմտյան մամուլը հետզհետե ավելի է շեշտում Ռուսաստանի նախագահի ընկնող ժողովրդականության մասին: Առաջ անցնելով, ոմանք միաժամանակ շեշտում են նախագահ Գորբաչովի դերի մեծացումը, ըստ երեւույթին կանխավ խանդավառվելով այդ հեռանկարով: Ստորեւ բարգմանաբար լույս տեսնող հոդվածը պատկանում է առաջիններին թվին, հիմնված կոնկրետ փաստի՝ չեչենա-ինգուշական դեպքերի վրա:

Անցյալ օգոստոսի երեք օրերին Ռուսաստանի նախագահ Բ. Ելցինը պատմության այդ դրամատիկ պահի ամենանշանավոր մարդը դարձավ: Պահպանողականների հեղաբրջման փորձի դեմ համառ դիմադրության շնորհիվ նա Խ. Միության նախագահ Մ. Գորբաչովի սվերը լինելուց վերածվեց երկրի ամենաուժեղ ղեկավարի: Այդ ժամանակվանից ի վեր, քաղաքական բազմաթիվ վեճերում Ելցինի կերպարը կորցրեց իր փայլի մի մասը եւ անցյալ շաբաթ դիմակայվելով հեղաբրջումից հետո ամենախոցոր ճգնաժամով, ցավալիորեն սայթաքեց եւ առավել եւս սրեց բազմաթիվ ճգնաժամերից Ռուսաստանը դուրս բերելու նրա կարողության շուրջ գոյություն ունեցող բոլոր կասկածները:

Հանդիպելով Ռուսաստանի հարավային Չեչենա-Ինգուշական փոքրիկ-հանրապետության գանգստերական ղեկավարության աղբսամբությանը, նոյեմբերի 8-ին Ելցինը հրամանագիր ստորագրեց արտակարգ դրություն մտցնելու վերաբերյալ: Նա պահանջեց, որ չեչենները վերադարձնեն իրենց զենքերն ու այդ պահանջը դարձադրելու համար նրերին գործերի նախաբարությանը պատկանող զորքեր ուղարկեց այնտեղ: Ռուսական կիսազինվորական ջոկատների Չեչենա-Ինգուշական հանրապետության մայրաքաղաք Գրոզնիի օդանավակայան ժամանումով թվում էր, որ արյունահեղությունն անխուսափելի է: Չեչենական աղբսամբների ղեկավար Դուդաեւի գինված կամավորները շրջափակեցին միութենական զորամիավորումները, մինչ հազարավոր մարդիկ դատարասվում էին դաշտանել իրենց քաղաքը որեւէ գրոհից:

48 ժամվա ընթացքում Ելցինի հրամանագիրը փշրվեց, եւ նա ստիպված եղավ հետ կանչել բանակայիններին: Դրան հակառակվեց Ռուսաստանի փոխնախագահ Ա. Ռուցկոյը, որը դաշտանեց արտակարգ դրության հաստատման որոշումը: Բայց Ռուսաստանի խորհրդարանի երկու օր տեւած հստակ նիստում դաշտգամավորները ջախջախիչ մեծամասնությամբ քվեարկելով հրամանագրի դեմ, հարվածն ուղղեցին Ելցինին: Ռուսաստանի խորհրդարանի ազգամիջյան հարցերի հանձնաժողովի նախագահ Ն. Մեղվեդեւը մեկնաբանելով տեղի ունեցածն, ասաց. «*Ազգամիջյան ընդհարումներն ուժի միջոցով լուծելը անընդունելի է, եւ դրանով վնաս կհասցվի Ռուսաստանի նախագահի իշխանությանը*»:

Չեչենա-Ինգուշեթիայի հետ առճակատումը սեպտեմբերից ի վեր գնալով ավելի էր սրվում, երբ Կասպից ու Սեւ ծովերի միջեւ 1.3 միլիոն մեծամասամբ այլնի դավանանքի դաստանող իսլամներից բաղկացած ինքնավար հանրապետության ազգայնականներին հաջողվեց վտարել կոմունիստական կուսակցության ղեկավարներին եւ Ռուսաստանից դատանջել ինքնիշխանություն: Որպեսզի ինքնորոշման հոսքերի մասին հուշագրություն գրելու համար երկշաբաթյա արձակուրդի մեկնած Ելցինը որեւէ ինչ չարեց: Բայց հետո, վիճելի ընտրությունների արդյունքով, որը Ելցինի կառավարության կողմից հակաօրինական համարվեց, խորհրդային օդուժի պաշտոնաթող զորավար Դուդաեւը հանրապետության նախագահի պաշտոնին տիրացավ: Երբ Ելցինը հրապարակեց արտակարգ դրության մասին իր հրամանագիրը, թիկնապահներով եւ զինվորական հանդերձանքով շրջող Դուդաեւը խոստացավ ազատագրական պայքար մղել:

Գործելով գլխավորապես օգնականների խորհուրդներով, Ելցինը Դուդաեւին ձեռնտու նախաձեռնությամբ հայտարարեց արտակարգ դրություն, որը ավելի եւս ընդլայնեց Դուդաեւի կողմնակիցների թիվը: Իսկ Մոսկվայում, ընդհակառակը, Ելցինին քննադատեցին բոլոր կողմերից, բարենորոգումների կողմնակիցները նրան մեղադրեցին շատ հեռուն գնալու մեջ, իսկ պահպանողականները՝ անհրաժեշտ քայլեր չանելու: Մոսկվայի քաղաքագլուխ Պոպովն ասաց, որ Ելցինը ոչինչ չի սովորել Գորբաչովի դասը փորձից, որը երբեմն արյունալի պայքարի գնով ուզում էր Խ. Միության հանրապետություններին միասնական պահել: Նրա կարծիքով, նույնն է անում Ելցինը, երբ փորձում է պահպանել Ռուսաստանի բազմազգ կազմը: Նույնիսկ Գորբաչովը Ելցինին կոչեցրեց «երկու շախմատիստներ» կիրառելու համար:

Թեեւ լարվածությունը բուլացել է այժմ Չեչենա-Ինգուշեթիայում, սակայն դեռեւս հարցը չի լուծվել: Ելցինը պարտավոր է բանակցությունների միջոցով համաձայնության հասնել Դուդաեւի հետ, որի համար անցյալ շաբաթվա առճակատումը հաղթանակ էր: Ռուսաստանի համար ազգամիջյան ընդհարումները նոր են սկսվում: Թեեւ Ռուսաստանի 147 միլիոն բնակչության միայն 20 տոկոսն են կազմում ոչ ռուս ազգությունները, այնուամենայնիվ, նրանք տարբեր տարածքներում, հանրապետություններում եւ «ինքնավարություններում» զբաղեցնում են դաշնակցային տարածքի մոտավորապես կեսը: Նրանցից շատերը, ինչպես յակուտները, բաշքիրները եւ բաշկիրները, արդեն սկսել են ավելի մեծ անկախություն պահանջել:

Նախագահ ընտրվելուց առաջ Ելցինն այդ ժողովուրդներին խոստացել էր «*այնքան ինքնիշխանություն, որքան ցանկանում են*», խոստում, որը հավանաբար կցանկար ետ վերցնել: Բայց փոքրիկ հանրապետությունների մղումը դեռի ինքնիշխանություն ավելի շատ վերաբերում էր տնտեսական, քան գաղափարախոսական կամ ինքնակառավարման ցանկությանը:

Խ. Միության քայքայումը լիցք է հաղորդում այն անհիրապատական փաստարկին, թե երկրում ամեն մի որոշակի շրջան ավելի լավ վիճակ կունենա, եթե չէր խորտակվող նավը: Չեչենա-Ինգուշ ժողովրդի համար, որտեղ Մոսկվայի հետ համեմատած կիսով չափ ավելի ցածր է աշխատավարձը, անկախանալը բվում է ավելի լավ է, քան «նավում» մնալը:

Այդ ըմբռնումը փոխելու եւ ռուսների պատասխանությունն առահովելու համար Ելցինը պարտավոր է արագ գործել տնտեսության ասպարեզում: Երեք շաբաթ առաջ նա առաջարկեց որոշ հանդուգն բարենորոգումներ, ներառյալ սեփականաշնորհման գծով գների ազատականացման ծրագրեր: Բայց փոխանակ արագ շարժվելու, նա կանգ առավ՝ բույլ տալով, որ ընդդիմախոսները հզորանան: Ճնշմանը ենթարկվելով՝ Ելցինն ասիճանաբար բուլացնում է իր ծրագրերը: Եթե նրան հաջողվի Դուդաեւի հետ համաձայնության գալ, արդեն կկարողանա խուսանավել չեչենական ճգնաժամի ընթացքում բույլ տված կողմից սխալից, իսկ եթե ձախողվի տնտեսական բարենորոգումների գծով, ճգնաժամերն ավելի կբասանան:

«Ազգ»
25 նոյեմբեր, 1991

Բանակցությունները փակուղու մեջ են

Խորհրդային ուսումնական բրիգադի Կուբայից դուրս հանելու մասին Հավանայում սկսված բանակցությունները, ըստ երեւույթին, ընկան փակուղու մեջ: Արտաքին հարաբերությունների նախարարությունում հաստատեցին, որ խորհրդային դաստիրակությունը, բացի նրա ղեկավար, հատուկ հանձնարարությունների դեսպան Վյաչեսլավ Ուստինովից եւ մի քանի փորձագետներից, արդեն վերադարձել է Մոսկվա: **«Մենք կարծիքներ փոխանակեցինք այդ հարցի վերաբերյալ, եւ բանակցությունները կշարունակվեն»**, հայտարարեց խորհրդային դիվանագետներից մեկը:

Սակայն, համաձայն ոչ դիվանագիտական աղբյուրների, բանակցությունների ժամանակ դժվարություններ ստեղծվեցին այն բանի հետ կապված, որ կուբայական կողմը 3 հազարանոց խորհրդային ռազմական անձնակազմի դուրս բերման հարցը կապում է Գուանտանամո կղզում գտնվող ամերիկյան բազայի լուծարման հետ: Չհաստատված տվյալների համաձայն, խորհրդային դաստիրակությունը, համարելով այդ շաղկապվածությունը անընդունելի, առաջարկեց դուրս հանել իր զորքերը մի քանի փուլերով: ■

digitised by A.R.A.R.@

«Մեծ Ադրբեջան» առասպելը ստալինյան դասմաբաններու հորինվածքն է

Լոնդոնում հրատարակվող *«Քեյհան»* շաբաթաթերթից թարգմանված հոդվածը, որն ամբողջությամբ ներկայացվում է ընթերցողի ուշադրությանը, պատկանում է ժնեւի միջազգային ուսումնասիրությունների հասատության դասախոս, ազգությամբ պարսիկ, դոկտ. Մոհամմեդ Ռեզա Ջալիլիի գրչին: Այն արտատպվել է Շվեյցարիայում լույս տեսնող *«Le Nouveau Quotidien»* թերթի հոկտեմբերի 2-ի համարից: Հոդվածագիրը, «Քեյհան»-ի կողմից մինչ այդ ներկայացված նմանատիպ հոդվածների հեղինակների նման, մտահոգությամբ է խոսում նախկին Խ. Միության հարավային հանրապետություններում տեղի ունեցող արմատական վերափոխումների ընթացքում Թուրքիայի վարած գործուն քաղաքականության մասին եւ գտնում, որ Թեհրանը պանթուրքիզմին հակադրվելու համար կարող է վարել պաշտպանողական ստրատեգիա՝ աղավինել պանիրանիզմին, կամ որդեգրել հարձակողականը՝ հովանավորել պանիսլամիզմը: Այժմ արդեն, երբ Ադրբեջանի անկախությունը ճանաչվել է Անկարայի կողմից, Իրանը կփորձի շրջանում ստեղծել հակակշիռ: Նման իրավիճակում Հայաստանն իր աշխարհաքաղաքական դիրքով հատուկ նշանակություն է ձեռք բերում Թեհրանի համար:

Ա.Ա.

Օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի կողմից ընդունված անկախության հռչակագրով եւ սեպտեմբերի 21-ին Հայաստանում անցկացված հանրաքվեի արդյունքներով այդ հանրապետությունների անկախացումը կարեւորագույն իրադարձություններ էին Անդրկովկասի կյանքում: Անկախացած Մերձբալթյան երեք հանրապետություններից հետո, հանձինս Վրաստանի, Ադրբեջանի եւ Հայաստանի, Անդրկովկասում էլ ստեղծվել են երեք «պետական» միավորներ, որոնք կենտրոնի հետ առավելապես տնտեսական նվազագույն կապեր պահպանելով հանդերձ, ձգտում են դառնալ միջազգային իրավունքի սուբյեկտ:

Անդրկովկասում ծավալվող խոր վերափոխումներն իրենց կնիքն են թողել ոչ միայն նախկին Խ. Միության նորաստեղծ պետությունների, այլեւ հարավային երկու հարեւանների՝ Իրանի եւ Թուրքիայի վրա: Նշված երկու երկրները ակամայից ներգրավվել են շրջանում տեղի ունեցող աշխարհաքաղաքական արմատական վերափոխումների ոլորտի մեջ:

Իրանը եւ Թուրքիան նախ եւ առաջ կորցնում են իրենց դիրքերը իբրեւ գերիշխող մի երկրի անմիջական հարեւաններ, ձերբազատվում կամ զրկվում են այդ հարեւանությունից բխող բոլոր հոգսերից եւ արտոնություններից: Անհանգստացնող հանգամանքներն էին, իհարկե, մի հսկայի հետ սահմանակից լինելը, որի հետեւանքով մեծապես այդ պետությունների երկնակամարին կախված էր մի մեծ սպառնալիք: Իսկ առավելությունները հիմնականում պայմանավորված էին Խ. Միության ռազմավարական կշիռով, որի շնորհիվ Իրանը եւ Թուրքիան ձեռք էին բերել միջազգային բացառիկ կարգավիճակ:

Նոր վերափոխումների շնորհիվ անհետանում է նաեւ կոմունիստական սպառնալիքը, որը 1917 թ. հոկտեմբերյան հեղաշրջումից ի վեր անհանգստացնում էր նշված երկրների ղեկավարներին: Վերջապես ավելի փոքր պետական միավորների առաջացումով Իրանը եւ Թուրքիան կարող են շունչ քաշել: Այդ նորաստեղծ պետությունները միջնորմի դեր կխաղանեն եւ Ռուսաստանի նվաճողական ձգտումների ի հայտ գալու դեպքում կընդունեն առաջին հարվածները: Անդրկովկասում բորբոքված ազգամիջյան բախումների բացասական հետեւանքներով հանդերձ, Իրանն ու Թուրքիան, այնուամենայնիվ, անտեսում են դրանք:

Իրանա-խորհրդային սահմանների երկու կողմերում ապրում են թրախոս ազերիներ: Խորհրդային Ադրբեջան կոչվող հանրապետությունը դարասկզբին ռուս-իրանական պատերազմների հետեւանքով անցել է Ռուսաստանին: Այդ ժամանակներից սկսած Արաքսի հյուսիսային ափերում ապրող ազգաբնակչության նկատմամբ կիրառվում է ռուսականացման քաղաքականություն: Միեւնույն ժամանակ դարասկզբին Բաքվում եւ այլ քաղաքներում մեծ թափ ստացան պանթուրքիստական շարժումները: Եթե մի կողմից հաշվի առնենք իրանական Ատրպատականում երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտից հետո ծավալված անջատողական շարժումները եւ դրան ավելացնենք նույն ժամանակաշրջանում ստալինյան պատմաբանների հորինած *«Մեծ Ադրբեջան»* առասպելը, ապա կարելի է հասկանալ Իրանի մտահոգությունը նորաստեղծ հանրապետություններում թրախոս ազգաբնակչության մեջ ծայր առած անհաշտ ազգայնամոլական ձգտումների համար:

Թուրքիան իր դիրքով մեծապես տարբերվում է Իրանից: Թուրքիայի սահմաններում թուրքական պետության ստեղծումը ոչ ազգային ինքնիշխանությունը, ոչ էլ տարածքային ամբողջականությունը վտանգելու առումով չի կարող անհանգստացնել Թուրքիային: Ընդհակառակը, Անկարան կարող է նոր իրավիճակն օգտագործել վարելու միջինասիական հանրապետություններում «Թուրքական աշխարհն» իրար միացնող գործոնների մեծացմանն ուղղված քաղաքականություն: Թերեւս միակ անհաղթահարելի գործոնը Թուրքիայի համար այն է, որ ադրբեջանցիները շիա-մահմեդականներ են, եւ նրանց պատմական անցյալը, ավանդույթները, ինչպես նաեւ Իրանի նկատմամբ ունեցած հակումները կարող են ազերիներին ներգրավել իրանական միջավայր: Սակայն ժամանակակից Թուրքիան իր տնտեսական որոշակի հաջողություններով, լիբերալիզմով, կառավարման աշխարհիկ համակարգով, բաց դռներով եւ ժողովրդավարության բնագավառում նկատվող առաջխաղացումով հզոր մրցակից է Իրանի համար:

Այսպիսով, նոր հեռանկարներ են բացվում Թուրքիայի առջեւ: 150 մլն բնակչություն ունեցող լայնատարած «Թուրքական աշխարհը»՝ Բալկաններից մինչեւ Չինաստանի սահմանները, Անկարային հնարավորություն է տալիս ընդլայնելու իր մշակութային, տնտեսական եւ, նույնիսկ, քաղաքական հարաբերությունները այդ երկրների հետ: Սակայն, եթե Թուրքիայի եւ «Թուրքական աշխարհի» հարաբերությունների զարգացմանը զուգընթաց ավելի լայն տարածում ստանա պանթուրքիզմի գաղափարախոսությունը եւ այն Օսմանյան կայսրության վերջին տարիների նման որդեգրվի թուրքական իշխանությունների կողմից, ապա հարեւան պետությունների, եւ առաջին հերթին Իրանի հետ հարաբերությունների սրման վտանգը ավելի ակնթարթ է դառնում:

Պանթուրքիզմի սպառնալիքին հակադրվելու համար Թեհրանը պետք է պաշտպանողական եւ հարձակողական ստրատեգիաների միջեւ ընտրություն կատարի՝ կամ պետք է պարզախոս երկրներում (Իրանում, Ադեղանստանում եւ Տաջիկստանում) աղահովի քաղաքական միասնություն, կամ էլ, հովանավորելով Թուրքիայում, Կովկասում եւ Միջինասիական հանրապետություններում սկիզբ առած իսլամական շարժումները, աղավինի պանիսլամիզմին եւ հարկ եղած դեպքում հովանավորի Թուրքիայում ծավալված քրդական անջատողական շարժումները: Չնայած ներկայումս այս աշխարհամասում համեմատական անդորր է տիրում, սակայն այդ անդորրը խաբուսիկ է եւ ժամանակավոր:

■

Շոտլանդիա. անկախականների կուսակցությունը

Շոտլանդիայի Ազգային կուսակցությունը երազում է ընդօրինակել բալթյան պետություններին եւ երկրի ինքնիշխանությանը հասնել 1993 թվականին: Ահա թե ինչ է գրում այդ մասին ֆրանսիական «Լը Պուենթ» հանդեսը իր 15 նոյեմբեր թվում:

«Ջեյմս Բոնդը երկրպագու էր: Կարծում էին, թե նա ծառայում է Բրիտանիայի թագուհուն, բայց իրականում նա գործում էր Շոտլանդիայի անկախականների օգտին»: Այս պնդումն է արվում Շոտլանդիայի Ազգային կուսակցության վերջին համագումարի առթիվ ստեղծված կինոժապավենում, որը մի իսկական մեղադրական ճառ է Լոնդոնի կառավարության կողմից նահանգի «բալանման» դեմ:

Դա գովազդի մի ձեւ է Շոտլանդիայի Ազգային կուսակցության նոր հավակնությունների համար՝ անկախ Շոտլանդիա ստեղծել 1993 թ. Եւրոպայում: Անջատականությունը երջանկային քաղաքական կյանքի այդ վերջագահ կուսակցության առուծախի առարկան է արդեն մոտ 50 տարի, բայց առաջին անգամ է, որ կուսակցությունը կոնկրետ ժամկետ է նշում, որպես տիպար ունենալով բալթյան երկրները եւ նկատի ունենալով եւրոպական մեծ ընկալի ստեղծման տարին:

Էդինբուրգում կուսակցության նստավայրում, նախագահ Ալեխ Սալմոնդը ասում է. *«Անկախությունը միշտ էլ նոյտակ է եղել, բայց այսօր այն իրագործելի է թվում: Եւրոպական համայնքի փոփոխությունները մեզ թույլ են տալիս երկրորդ կարգի բրիտանացիների մեր վիճակը փոխել առաջին կարգի եւրոպացիների վիճակով... Բարենպաստ համարվող միջազգային իրադրությանը գումարվում է թեչերիզմի տանջալի հաջորդած շատ ուժեղ ազգային զգացումը»: «Շոտլանդացիների մեծամասնության համար մենք ներկայացնում ենք կենտրոնական իշխանությունը,- խոստովանում է պահպանողականների պատասխանատուներից մեկը.- Մարգարեթ Թեչերի անձնական ոճն այստեղ վատ է գնահատվել, եւ գլխահակ մտցնելը ոչինչ չի կարգավորել»:*

«Անգլիայի լրատվության միջոցները, փաստորեն, երբեք մեր մասին չեն խոսում,- բացատրում է հեռուստատեսության թեմադրիչ Ջեյն Միլարդը: -Դա հոդատության զգացում է առաջացնում, որն արտահայտվում է այն բնագավառներում, որտեղ մենք կարող ենք գերազանցել նրանց: Երկու տարի առաջ Մյունխենում մենք հաղթեցինք ազգերի մրցավազքում, պատության մասնակցել Անգլիային, որին նախապատվություն էր տրվում: Կարող եմ ասել, որ դա լավ դաս եղավ նրանց համար»:

Մշակութային առումով Շոտլանդիան ընդգծում է իր գոյությունը պատկերացնել պարկաղուկից, վանդակավոր զգեստներից եւ ընտիր վիսկիից, ավելի լայն ընդգրկումով բարձրական Էդինբուրգի եւ արդյունաբերական Գլազգոյի միջեւ ծնունդ առնող հակամարտության գնով: Էդինբուրգը շատ առաջ է անցել, մասնավորապես, միջազգային փառատոնների շնորհիվ, որոնք անցկացվում են օգոստոս ամսին եւ տարեցտարի ավելի մեծ հռչակ բերում քաղաքին: Իսկ Գլազգոն անցյալ տարի եւրոպական մշակույթի մայրաքաղաք «օծվեց» Ֆլորենցիայից եւ Փարիզից հետո:

«Դրսման այն է, որ արտիստական միջավայրում մյուս բնագավառներից ավելի շատ հաջողությունը ձեռք է բերվում տարագրության միջոցով», ասում է նկարիչ Ռիչարդ Դեմարկոն, որի հայրը իտալացի է, իսկ մայրը իռլանդուհի: Նա նախընտրել է չհեռանալ երկրից եւ այսօր հույսեր է կապում Ֆրանսիայի հետ, որը կարող է նպաստել աշխարհամասում Շոտլանդիայի բարգավաճմանը:

Սյուրարների գահաստոհմի եւ Ֆրանսիայի բազավորության երթմնի գործակցության հուշը շատ անմոռանալի արդյունքներ է տալիս: Շոտլանդիայի ազգայնականությանն ուսումնասիրելու համար այստեղ գնալով, Ֆրանսիացի Քրիստիան Ալբյուիսոնը հարեց այդ երկրի դատին: Նա կատակով իրեն անվանում է *«Շոտլանդիայի ազգային կուսակցության Ֆրանսիացի»: «Ուրիշ ազգերի ներկայացուցիչներ նույնպես կան,- ասում է նա.- կան նույնիսկ անգլիացիներ: Ինչպիսին էլ լինի այս ճակատամարտի առյուգան, ես գոհ եմ, որ աջակցել եմ շոտլանդացիներին, որոնք Ֆրանսիային օգնեցին անկախ մնալ Հարյուրամյա պատերազմի ընթացքում»:*

Բայց ադագան այնքան էլ պայծառ չէ, որքան պատկերացնում է Ալեխ Սալմոնդը, որն արդեն համոզված է, թե իր կուսակցությունը գալիք ընտրություններում մեծամասնություն կստանա 72 շոտլանդացի ընտրյալների մեջ, եւ այդ ժամանակ հարկ կլինի միայն Լոնդոնի հետ բանակցել իրենց անկախության ձեւական կողմերի շուրջը, իսկ Բրյուսելի հետ՝ Եւրոպական համայնքում Շոտլանդիայի նոր կարգավիճակի շուրջը:

Ինվերնեսում կայացած համագումարում ազգային կուսակցությունը, իրոք, հաջողության հասավ եւ կանխատեսումների համաձայն կստանա քվեների 25 տոկոսը եւ առաջ կանցնի *«Պահպանողական ունիոնիստներից»:* Բայց ընդհանուր ընտրությունները դեռ հեռու են, եւ լեյբորիստները պահպանում են իրենց առաջնությունը: Պատգամավորական տեղերի մեծամասնությունը նվաճելու համար (հիմա ունեն միայն հինգ տեղ) նրանք պետք է ստանան քվեների ավելի քան 40 տոկոսը:

Դա հնարավոր է, բայց հիշ հավանական: Սեպտեմբերի վերջերին *«Սքոթսմեն»* օրաթերթի հրապարակած հարցման արդյունքների համաձայն, Շոտլանդիայի կարգավիճակը շոտլանդացիների մտահոգությունների ցանկում հաջորդում է գործազրկությանը: Բացի դրանից, Շոտլանդիայի Ազգային կուսակցությունը մեղադրում են նեղ ազգայնականության համար, որը վանում է ընտրողների մի մասին:

Էլ չենք խոսում այն տատանումների մասին, որ Շոտլանդիայի անկախությունը առաջացնում է Բրյուսելի եւ մանավանդ Լոնդոնի գործակիցների շրջանում: Քաղաքականապես ազատագրումը բանկ կնստեր լեյբորիստների վրա: Նրանք կկորցնեին այն միջնաբերդը, որն իրենց տվել է սեփական պատգամավորների մոտ մեկ քառորդը եւ կուսակցության ստվերային կաբինետի բազմաթիվ նշանավոր անդամների, ինչպիսիք են Ջոն Սմիթը, Ռոբին Կուկը եւ Գորդոն Բրաունը:

Տնտեսապես կորուստը շոշափելի կլիներ. Մեծ Բրիտանիայի նավթը արդյունահանվում է բացառապես Շոտլանդիայում, կազմելով Եւրոպայի կարիքների 20 տոկոսից ավելին, նահանգը Անգլիայի հյուսիսային շրջաններից ավելի լավ է անցել իր ավանդական արդյունաբերության փոխարկի փուլը եւ հարավից ավելի լավ դիմացել ներկայիս տնտեսական նահանջին:

Իսկական անկախությունից ավելի Շոտլանդիայի ադագան պատկերանում է որոշ իշխանությունների վերաբաշխմամբ եւ Էդինբուրգում խորհրդարանի ստեղծմամբ: Արդեն 1979 թվականին շոտլանդացիների 52 տոկոսն այդ լուծման օգտին էր արտահայտվել հանրաքվեի ժամանակ, սակայն անբավարար մասնակցության պատճառով նախագիծը կիսատ էր թողնվել: Այս անգամ լեյբորիստները եւ լիբերալ-դեմոկրատներն իրենց ծրագրում նշել են որոշ իշխանությունների վերաբաշխումը, իսկ պահպանողականները սկսում են այդ մասին խոսել կիսաձայն: Այնուամենայնիվ, ինքնավարության առումով Շոտլանդիան զրոյից չի սկսելու, նա թողարկում է սեփական դրամ, հրապարակում օրենքներ, ունի իր կրթական համակարգը եւ պրեսբիտերական (կիսաաշխարհիկ) եկեղեցին: Այդ բոլոր արտոնությունները նրան տվել էին 1989 թվականին... Շոտլանդիան Անգլիային միացնելու պայմանով:

■

Իսկ որտե՞ղ է ոսկին

Մեծ Բրիտանիայի արտաքին գործոց նախարար Դուգլաս Հոգգը առաջին բարձրաստիճան քաղաքական դեմքն է Լոնդոնից, որ պաշտոնական այցով ժամանել է մերձբալթյան հանրապետություններ: Վիլնյուսում, Ռիգայում եւ Տալլինում ինքնակված հարցերից մեկն էլ ոսկու հարցն էր:

Ավելի ճիշտ, խոսքը գնում է այն ոսկու վերադարձման մասին, որը նրանք հանձնել էին անգլիական բանկին 1940 թ.: Հայտնի է, որ այն ժամանակ Էստոնիան, Լատվիան եւ Լիտվան ընդհանուր 24,2 տոննա կշռով ոսկի են տեղափոխել Բրիտանիայի, Ֆրանսիայի, Շվեդիայի եւ ԱՄՆ-ի բանկերը, որի այսօրվա արժեքն է 153 միլիոն Ֆունտ ստեռլինգ: Ըստ որում, այդ ոսկուց տասնչորս տոննան, որպես անձեռնմխելիություն, հանձնվել է Անգլիական բանկի պահպանությանը:

Ֆրանսիան վերջերս հայտարարեց, որ պատրաստվում է վերադարձնել իր ամբողջ բաժինը: Շվեդիան եւ ԱՄՆ-ը նույնպես պատրաստվում են հետեւել այդ օրինակին: Շատ ավելի բարդ է իրավիճակը Բրիտանիայի հարցում: Բանն այն է, որ 1967 թ. Լոնդոնը խոշոր առեւտրաընտեսական գործարքի շրջանակներում վաճառել է այդ ոսկին Խորհրդային Միությանը:

Այժմ Անգլիական բանկին է Վիլնյուսում մեղադրանք ներկայացվում ոսկու անօրինական վաճառքի համար: Դուգլաս Հոգգը Վիլնյուսում հայտարարեց, որ պատրաստ է քննարկել այդ հարցը: Իսկ կառավարության պաշտոնական ներկայացուցիչն ավելացրեց, որ Լոնդոնը պատրաստվում է եւս մեկ անգամ վերանայել ոսկու վերադարձման հարցը եւ կփորձի գտնել հարցի դրական լուծում:

■

digitised by A.R.A.R.@

Բառ եւ մտածողություն

Աշխարհում հաշվվում է մոտ հազար լեզու: Իսկ մտածողության բանի՞ ձեւ կա արդյոք

Եթե Ֆրանսիացին խմում է կարմիր գինի, առա իտալացին եւ հույնը՝ հարբում են «սեւ» գինուց: Եթե արեւմուտքցին կաղույտ երկինքը տարբերակում է կանաչ տերեւներից, ապա ճապոնացին միեւնույն գույնով է նկարագրում երկինքը, ծովը եւ խոտը: Եթե իսպանացին դերանվանական բազմաթիվ ձեւեր ունի մեկ անձին կամ մի բանի անձանց եզակի կամ հոգնակի թվով դիմելու համար, ապա անգլիացին «դուք» է ասում բոլոր դեպքերում: Արտահայտության այսպիսի բազմազանությամբ հանդերձ, բոլոր ժողովուրդները արդյոք միեւնույն ձեւո՞վ են մտածում:

Պլատոնն ասում էր, որ միտքը նախորդում է լեզվին, բանգի բառերը սոսկ վերարտադրում են իրականությունը, օրինակ, «բեռս» («ասված») բառը, ըստ նրա բացատրության, ծագում է հունարեն «բեին» («վազել») բայից: Նկատի ունենալով ասվածային ասողերի հավերժական ընթացքը: Արդ, միտքը բովանդակությունն է, որը լեզվական ձեւ է ընտանում: Դա մի անկախ եւ ազատ ամբողջություն է, որը, Ռիվարոլի խոսքերով ասած, բառերը որպես «հագուստ» փոխ է առնում նյութականանալու համար, բայց հարա փորձեք հանել այդ «հագուստը» եւ մտածել առանց լեզվի օգնության: Իրականում, եթե փորք երեխան գիտակցական մտածողության է հասնում միայն լեզուն բացվելուց հետո, պատճառն այն է, որ մտածողությունն անհնար է առանց լեզվի: Միեւ էլ մտածում ենք որեւէ լեզվով:

Մաղամ դը Ստայելը զարմանում էր գերմաններենի տարօրինակ բնույթից, որտեղ *«իմաստը սովորաբար հասկացվում է միայն նախադասության վերջում»*: Եւրոպայի որոշ ճանապարհորդներ, նկատելով, որ բազմաթիվ լեզուներ շեղվում են մեր շարահյուսական տրամաբանության *«ենթակա-ստորոգյալ-խնդիր»* կանոնից, այն ենթադրությունն էին անում, թե *«այդ մարդիկ հակառակ ձեւով են մտածում»*: Քանգի, սեփական լեզվի պարտադրած կանոններից ազդվելով, դյուրությամբ կարելի է հանձնվել էթնոցենտրիզմի գայթակղությանը: Եւ ոչ այնքան հեռավոր անցյալում եղան գիտնականներ, որոնք, կուրացած լինելով զարգացման այն բարձրագույն աստիճանից եւ կատարյալ ձեւից, որ իրենց կարծիքով, ներկայացնում էր լատիներենը, սկսեցին այդ իդեալական մոդելից տարբերվող լեզուները համարել տարօրինակ շեղումներ եւ փորձում էին վտանգավոր կարծեր ստեղծել լեզվի, մշակութային զարգացման աստիճանի եւ մաշկի գույնի միջեւ...

Հիմա ընդունված է, որ կարող են գոյություն ունենալ այնքան ընկալումներ, որքան լեզուներ կան, բանգի, ինչպես ցույց տվեց նշանավոր լեզվաբան Էմիլ Բենվենիստը 50-ական թվականներին, մենք մտածում ենք *«նախօրոք մեր լեզվի ձեւավորված աշխարհի համեմատ»* եւ *«մեր խոսքն է սահմանորոշում ու կազմակերպում մեր մտքերը»*: Չինարեն, բերբերերեն, հինդիերեն, կեչուա լեզվով կամ առ այսօր երկրագնդում հայտնի վեց հազար լեզուներից որեւէ մեկով համաշխարհային բառաղաշարի մեկնաբանությունը կատարվում է սեփական լեզվակառուցվածքներով: Ամեն որ աշխարհը վերարտադրում է այն ձեւով, ինչպես ընկալում է իր լեզվի պրիզմայի միջով, իսկ լեզուն ինքը կազմակերպում է տվյալ հասարակության կարիքների համեմատ: Օրինակ, երբ մենք մտածում ենք «ուղղ», արաբը ընկալում է առնվազն հարյուր հնարավոր երանգ, որոնք համապատասխանում են նույնքան տարբեր բառերի, իսկ երբ մենք մտածում ենք «ձյուն», էսկիմոսը ընկալում է ձյան բազմաթիվ վիճակներ:

Բայց լեզվական կառույցները ու մտքի կառույցները մինչեւ ո՞ր աստիճան են սերտորեն կապված: Երբեմն ծայրահեղությունը հասցնում է այնպիսի պնդումների, ինչպիսիք են հետեւյալները, ռուսները կոլեկտիվիստական համակարգ են ստեղծել, բանի որ փաստորեն «ունենալ» բայը չունեն, ճապոնացիները ժխտում են անհատին ի նպաստ հանրության, բանի որ ճապոներեն նախադասությունը բերականական ենթակա չունի եւ այլն: Լեզվաբան Կլոդ Աժեժը *«Խոսքի մարդը»* աշխատության մեջ ասում է. *«Անհնար է առաջացնել, թե որոշակի կապ գոյություն ունի լեզվաբանական կառույցների եւ մտքի համակարգերի միջեւ: Ազդեցության հարցում հարկավոր է վերապահումներով մոտենալ»*: Այլ կերպ ասած, ասա ինձ, թե դու ինչպես ես խոսում, եւ ես քեզ այնուամենայնիվ չեմ ասի, թե դու ինչպես ես մտածում:

ԼԳ Պորտ, 15.11.1991

Իվ Մոնտանի վախճանը

Մահացավ Իվ Մոնտանը... Ինչպես վայել է մեծ վարպետին՝ բեմի վրա, երբ ռեժիսոր Ժան-Ժակ Բենեքսը նկարահանում էր Մոնտանի վերջին ֆիլմի վերջին կադրերը: Շատ օգնության մեքենան նրան տարավ հիվանդանոց, որտեղ 3 ժամ անց նա վախճանվեց ինֆարկտից հետո: Նրա վերջին խոսքերն էին. *«Ես պրծել եմ բավականին երկար կյանք եւ ոչ մի բանի համար չեմ ափսոսում»*: Մնկ ամիս առաջ լրացել էր Մոնտանի 70-ամյակը:

Ֆրանսուա Միտերան. *«Մարեց նշանավոր արտիստի ձայնը, եւ գնաց մի դերասան, որը դարձավ մեր դարաշրջանի պատմության մի մասը...»*

Ալեն Դելոն. *«Մեր ընտանիքը լինց ամենամտերիցներից մեկը: Բուրվիլի, Գաբենի, Վենտուրայի գնալուց հետո դերասանական արվեստի հանդեպ ունեցած որեւէ հետաքրքրությունը կորչում է...»*:

Կոմունիստի որդի էր, երկար ժամանակ Ֆրանսիական կոմկուսի կողմնակիցը, իրեն համարում էր Սովետների իսկական ընկեր: Բայց երբ խորհրդային տանկերը ճզմեցին *«Պրագայի գարունը»*, Իվ Մոնտանը սկսեց դատապարտել խորհրդային իմպերիալիզմն ու տոտալիտարիզմը: *«Երկաթե վարագույրի»* մյուս կողմում ճշմարտությունը առաջացնում է զայրույթի՞ բռնկումներ: *«Վերջին տարիներին զբաղվում է կատաղի հակակոմունիստական պրոպագանդայով»*, գրում է նրա մասին խորհրդային *«Կինոհանդեսը»*... Իսկ 1991 թ. օգոստոսի 19-ին Մոնտանը առաջիններից էր, որ հանդես եկավ խորհրդության դեմ...

... Իվ Մոնտանը (Իվո Լիվի) ծնվել է 1921 թ. հոկտեմբերի 13-ին, իտալական Մոնսումանո քաղաքում, բանվորի ընտանիքում: Մուսոլինիի օրոք նրա ընտանիքը ստիպված էր տեղափոխվել Ֆրանսիա, Մարսել: 11 տարեկան հասակում աղագա երգիչը սկսում է աշխատել գործարանում, որպես սեւագործ բանվոր, հետո վարսավիրի աշակերտ: Ամեն առավոտ նրան արթնացնում էին մոր խոսքերը *«Իվո, մոնտա»* (Իվո, վե՛ր կաց), եւ երբ 17 տարեկան հասակում կայացավ նրա առաջնությունը, Իվո Լիվին դարձավ Իվ Մոնտան: Իվը երգում էր, պարում էաս դեմքերում նմանվելով այն ժամանակի հայտնի դերասաններին (հատկապես Ֆերնանդելին):

Էդիթ Պիաֆի հետ հանդիպումը կտրուկ փոխեց նրա ստեղծագործական ճակատագիրը: Երգչուհին բացեց նրա դեմ մեծ բեմի եւ կինոյի դռները: 1944 թ. օգոստոսին Փարիզի ազատագրման ժամանակ Մոնտանը երգում է մայրաքաղաքում իր ամենահայտնի երգերից մեկը՝ *«Չոր տերեւները»*:

Նույն ժամանակ սկսվում է նրա փայլուն կարիերան կինոյում: Նա նկարահանվել է բազմաթիվ «աստղերի» Մերլին Մոնրոյի (բերքերը էաս էին բամբասում նրանց սիրային կապի մասին), Սիմոնա Սինյորեի (որն 1949 թ. դարձավ նրա կինը), Բուրվիլի, Կատրին Դենյովի, Ժերար Դեպարդյեի, Ռոմի Շնայդերի, Միշել Պիկկոլիի հետ: Չար լեզուները դեռ այն ժամանակ էաս էին խոսում Իվ Մոնտանի սիրային արկածների մասին հայտնի դերասանուհիների հետ, իբր դա էր նպաստել նրա առաջընթացին: Բայց այդ բոլորը միայն խոսում է նրա օգտին: Այդքան էքեղ ու տաղանդավոր կանայք, նկատեք ինչպիսի անուններ՝ Էդիթ Պիաֆ, Մերլին Մոնրո, Սիմոնա Սինյորե, Կատրին Դենյով, Ռոմի Շնայդեր, չէին կարող սիրել ոչ արժանի եւ տաղանդով իրենց ամենամիջը ոչ հավասար մարդու:

Կինոյում Մոնտանի առաջին մեծ հաջողությունն էր *«Վախի վարձը»* կինոնկարը:

Իսկ լավագույնը նրա դերերն էին քաղաքական կինոմատոգրաֆում. *«Զետ»* Հունասանի «սեւ գնդապետների» մասին, եւ *«Ցանաչում»* ստալինյան տարիների մասին Չեխոսլովակիայում:

Նկարահանվելով Ժան-Ժակ Բենեքսի ֆիլմում, որը, բարեբախտաբար, ավարտված է եւ ուստով էկրանների վրա կլինի, Իվ Մոնտանը պատրաստում էր եւ նոր համերգային ծրագիր, որով պետք է հանդես գար փարիզյան վիթխարի *«Բերսի»* դահլիճում: Քաղաքով մեկ փակցված էին աֆիշները, որոնք հայտարարում էին, որ 1992 թ. մայիսին երգիչը մեկ ամիս հանդես է գալու Փարիզում: Դա պետք է լիներ մեծ արտիստի վերջին հյուրախաղերը: Երգիչը էաս էր ուզում, որ իրեն բեմի վրա տեսնի իր երեխամյա որդին՝ Վալենտինը:

Ֆրանսիացիները սիրում էին նրան, սիրում էին ու հավատում: Մի քանի տարի առաջ անցկացրած հարցումները ցույց տվեցին, որ նրանց 30 տոկոսը միայն Մոնտանին է տեսնում որպես Ֆրանսիայի նախագահ...

...Ֆրանսիան հրաժեշտ է տալիս Մոնտանին: Ֆրանսիան նորից լսում է նրա երգերը...

Համաշխարհային ֆուտբոլի աստղերը

Քամու որդի կամ «Սպիտակ Գարինչա»՝ Կլաուդիո Պոլ Կանիջիա

Ծնվել է 1967 թ. հունվարի 9-ին Արգենտինայում: Խաղացել է *«Հենդերսոն», «Ռիվեր փլեյթ»* (Արգենտինա), *«Վերոնա», «Ասլանտա Բերգամո»* (Իտալիա) ակումբներում: Աշխարհի փոխչեմպիոն, Արգենտինայի հավաքականի անդամ:

Ով չի հիշում այս շիկահեր խաղացողին, աշխարհի իտալական առաջնության հերոսներից մեկին, որը 2 անվրեպ հարվածներով «սպանեց» Ֆուտբոլային գրանցներին՝ Բրազիլիայի եւ Իտալիայի հավաքականներին: Այդ փորքամարտին հարձակվողը տարալեց կաշվե գնդակի կախարդների աշխարհի չեմպիոն դառնալու երազանքները: Կիսաեզրափակիչում արգենտինացու միակ հարձակումն անակնկալի բերեց Վալտեր Զենգային՝ Իտալիայի հավաքականի դարպասապահին: Կլաուդիո Կանիջիան հրճվում էր: Նրա մազերը հազարավոր փայլեր էին տալիս: Խաղընկերների ուսերին բռնելով ասպարեզը, Կանիջիան շնորհավորանքներ էր ստանում, իսկ Բուենոս Այրեսի տներում անընդհատ աղոթելով, մարդիկ նորից շնորհակալություն էին ասում իրենց նոր փրկչին:

Սակայն հենց այդ պատմական խաղում ինքը՝ հերոսը մրցավար Մ. Վոտրոյի կողմից դասվեց «սպանվածների» շարքը. «Ֆուտբոլի աստծուն» դեղին քարտ էր ցույց տվել: Կլաուդիո Կանիջիան զրկվել էր եզրափակիչ խաղին մասնակցելու իրավունքից: Նա մինչ այդ զգուշացում էր ստացել ԽՍՀՄ հավաքականի հետ խաղում:

Կանիջիայի բացակայությունը Արգենտինայի հավաքականի հաջողությունների վերջը եղավ. *«Այդ խաղը ամենակարեւորն էր իմ ապրածս հաջողություններում, խաղ, որին մասնակցելու համար երազել եմ շուրջ 4 տարի»*, ասաց Կանիջիան:

Աշխարհի առաջնությունից առաջ Բիլարդոն դեռ հույս ուներ Վալդանոյի հեմիաբային վերադարձին, որը Լարդի հիվանդության պատճառով 2 մրցաշրջան չէր խաղացել: Կանիջիային վերջին պահին միայն Մարադոնայի պահանջով ընդգրկեցին Իտալիա մեկնող հավաքականի կազմում: Նա Կամերունի հավաքականի հետ հանդիպման 2-րդ կեսում դուրս եկավ ասպարեզ եւ հաստատ վճռականությամբ որոշեց նոր հրավերն օգտագործել իր հաստիքային տեղը հավաքականում ապահովելու համար:



Դա Կանիջիայի աշխի ընկնելու վերջին հնարավորությունն էր:

Նրա կյանքը միաս մարտահրավեր է եղել. գրազներ, գլխի եւ ոտքի հարվածներ, որոնք խորթություն եւ տխրություն:

Դեռ երեխա էր, երբ բողեց բերեւ ալեսիկան: Այն ժամանակվանից, երբ 100-ից 1500 մ արագ էր վազում իր հակառակորդներից, իրեն նվիրեց Ֆուտբոլին: Կանիջիան իր երկու եղբոր եւ բարի տղաների հետ առավոտից մինչեւ երեկո մարզվում էր խաղադաշտում:

14 տարեկան չկար, երբ ծնողների կարծիքին հակառակ մեկնեց Բուենոս-Այրես, իր բախտը փորձելու «Ռիվեր Փլեյթում»:

Կլաուդիոն հիմար չէր: Նա լավ գիտեր, որ փառքին ու դրամին հասնելու համար պետք է ոիսկի դիմել եւ համոզված էր, որ իր փորձը կօգնի իրեն: Եւ Կանիջիան աշխի ընկավ դեռ պատանեկան տարիքում: Նա 18 տարեկանում ընդգրկվեց ազգային հավաքականում: Լինելով զգայուն, արագ կողմնորոշվող եւ կայուն խաղացող, Կանիջիան մի ժամանակահատված նույնիսկ դարձավ արգենտինական Ֆուտբոլասերների կուռքը: Ինքը ցավագին էր տանում, երբ աստղերը լքում էին հայրենիքը: Եւ ծնվեց Կանիջիա լեգենդը: Դա չափազանցում չէր: Հարձակողական Ֆուտբոլի ջատագովը ոչ միայն Ֆուտբոլային ներկայացումների խորհրդանիշ դարձավ, այլեւ արգենտինական կոպիս դաշտանների թիրախը:

Ամեն հանդիպումից հետո նրա մարզազգեստը լաթի էր նմանվում: Նույնիսկ ամեն մարզման ժամանակ նա վնասվածք էր ստանում: Սակայն արգենտինական դաժան Ֆուտբոլից դասեր էր քաղում: Մինչեւ աշխարհի իտալական առաջնությունը Կանիջիան Արգենտինայի հավաքականում արդեն հանդես էր եկել 24 անգամ: Նա հատկապես փայլել էր 1987 թ. Ամերիկայի առաջնության խաղերում:

Նրա փառքն ու դրամը աղտոտված էր: Նրա արագությունը եւ տեխնիկան անցնում էին երեւակայության սահմանները:

Կանիջիային առաջարկեցին պայմանագիր ստորագրել շամպրոն եւ մարզազգեստ արտադրող ընկերություններ հետ: Նրան նույնիսկ ցանկություն հայտնեցին իրենց կազմում տեսնել *«Յուվենտուս»*-ն ու *«Ռոմա»*-ն: Կանիջիան երջանիկ էր, հարուստ եւ զորոգ: Աստղի կյանքը հիվանդ ճանապարհով գնաց: Նա ոչ միայն հրապուրվեց բազմաթիվ գեղեցկուհիներով, այլեւ թմրադեղերով:

Կանիջիան այլեւս չէր «կրակում»: Նա ինքնատրամ էր լինում կոկաինով: Բարեբախտաբար, դատարանը չարձանագրեց թմրադեղերի օգտագործումը: Նա այդ պատմությունից մաքուր դուրս գալով՝ երդվեց մոռանալ ամեն ինչ:

Կանիջիան որոշեց վերադառնալ նախկին մակարդակին: Դրա համար ամենալավ ապիրը աշխարհի առաջնությունն էր: Եւ «քամու որդուն», ինչպես կոչում են մարզասերները, այլեւս հնարավոր չէր կանգնեցնել:

«Սպիտակ Գարինչան» դարձավ *«Սիսիֆոսի Ամուրայի»* դահիճը եւ համաշխարհային ճանաչում ստացավ: Նրան սկսեցին հրավիրել Միլանի «Ինտերն» ու Մադրիդի «Ռեալը», սակայն Կանիջիան «Ասլանտայի» հետ դուրս մնաց Իտալիայի առաջնության առաջին դիվիզիոնից: Դա նրա համար նոր մարտահրավեր էր: Կանիջիան նորից դեպ է աշխի ընկնի:

«Երբ ինձ «Մարսելը» վերցնի, մեկ մրցաշրջանում 25 գնդակ կխփեմ,- ասում է Կանիջիան,- 1994 թվականի աշխարհի գավաթը բահելուց առաջ»: Կանիջիան ընդամենը 24 տարեկան է:

ՕԼԶ, մարտ 1991

Բաշխիչը վարում է Սուրեն ԲԱՂՔԱՍԱՐՅԱՆԸ

digitised by A.R.A.R.@

Նոր տեղեկություններ ուղղաթիռի վթարի վերաբերյալ

Ինչպես պատմել է գնդապետ Պոլոզովը, նոյեմբերի 20-ին Աղդամում թռիչքից առաջ եղել է շատ տաժ խոսակցություն ադրբեջանական ղեկավարների, ԼՂՀ պարետ Ժինկինի եւ գլխավոր դատախազ Կովալյովի միջեւ:

Վերջիններս ճնշադատվում էին Խոջավենդի դատարկման պատճառով: Այդ խոսակցության ժամանակ Ժինկինը եւ Կովալյովը մատնանշում էին Հադրութի եւ Բերդաձորի դատարկված մոտ 20 գյուղերի փաստը եւ առաջարկում, որ ազդեցությունն է առաջ բերել հակազդեցություն եւ, որ մինչեւ օրս ոչինչ չի ձեռնարկվում տեղահանված բնակչությանը այդ գյուղերը վերադարձնելու համար: Այդ օրը եղանակն Աղդամում թռիչքային չէր, այդ մասին վկայում են եղանակային բյուրոյի տվյալները, սակայն Բաքվից ժամանած ղեկավարները զինվորականներից պահանջում էին ուղղաթիռն անհապաղ օդ բարձրացնել: Երբ նրանց պահանջները զինվորականների կողմից բավարարվեցին, ոտի ելան Աղդամի ազգային ճակատի ղեկավարները: Կարճ ժամանակում Աղդամի պարետատունը շրջապատվեց խառնամբոխով:

Կամ պետք էր թռչել, կամ սպառնում էին պայթեցնել պարետատունը, թեեւ այն գբաղեցնում է Աղդամի տնային կառավարչությունների մեկի առաջին հարկի երեք սենյակները: Ընտրություն չկար, զինվորական ղեկավարությունը տեղի տվեց: Թռիչքը կայացավ Մոսկվայի ժամանակով 13.30-ին: Ընդամենը 5-10 րոպե հետո տեղի ունեցավ օդային աղետը, սակայն այդ մասին հաղորդվեց միայն 15.30-ին: Աղդամից մինչեւ աղետի վայրը խրճուղիով ընդամենը 20-21 կմ է, իսկ օդով՝ երեւի 10 կմ: Վթարված ուղղաթիռը ԼՂՀ տարածքով թռել է 2-3 վայրկյան, հետեւաբար, այդ կարճ ժամանակը չէր բավարարի նույնիսկ ուղղաթիռի վրա նշան բռնելուն, հասկանալս, որ թռիչքը հայերի համար հույժ գաղտնի էր, եւ այդ մասին Արցախում անտեղյակ էին:

Վթարից հետո տեղանքը շրջապատվել է ադրբեջանական համատարածքային զորամիավորումներով, եւ դժվար թե բալանի համար այնտեղ պատահական մարդ հայտնվեր: Հնարավոր է, որ բալանը իրականացվել է պաշտոնական անձանց միջոցով: Վթարատեղից հեռու չեն նաեւ Աղդամի շրջանի Մարզլու, Բաղմանլաս եւ Գյուլաբլու գյուղերը, որոնց անասնապահները օմոնականների հսկողությամբ տեր ու տնօրինություն են անում այդ տարածքում հասկանալս, որ Աղդամ-Մարտունի խճուղին ամբողջությամբ գտնվում է ազերիների հսկողության տակ, եւ վերջին ամիսներին ԼՂՀ-ի մեհենաների համար այն փակ է:

Կա նաեւ մի նրբություն: Հավաստի աղբյուրներից իմանում ենք, որ ուղղաթիռում եղել են ոչ թե 21 մարդ, ինչպես հաղորդել են պաշտոնական մարմինները, այլ ոչ պակաս, քան 30: Ուղղաթիռում էին նաեւ մի շարք պաշտոնական անձանց բիկնապահներ եւ օմոնականներ, որոնք երեւի Ադրբեջանում մարդ չեն համարվում, ուստի չեն հայտարարվում նրանց ազգանունները: Ուղղաթիռում պետք է լիներ նաեւ ազգային ճակատի ներկայացուցիչ Կարաեւը, որը վերջին պահին ինչ-ինչ պատճառով բացակայում էր:

Պատահա՞կ էր արդյոք այն փաստը, որ արգելվեց ԼՂՀ փորձագետների եւ նույնիսկ Անվտանգության կոմիտեի ներկայացուցիչների ժամանումը վթարի վայր:

Պետք է հաշվի առնել նաեւ, որ վթարից հետո թռիչքի անձնակազմի ընդհանուր հրամանատար Վիտալի Ֆյոդորովիչը ճնշման տակ է հայտարարել, թե եղանակը թռիչքային էր, ինչպես հակառակ դեպքում մեղքի պատասխանատվությունն ընկնում է նաեւ իր վրա: Մի կողմից թռիչքն իրականացվել է Աղդամի ժողովրդի կողմից ճնշման տակ, իսկ մյուս կողմից, թռիչքից հետո մոռանալով այդ բոլորը, նոր ճնշմամբ հրամանատարից կորզվել են «եղանակը թռիչքային էր» բառերը:

Ըստ ադրբեջանական փորձագետների հայտարարության, հավանական է՝ պայթել է: Իսկ պայթել կարող էր կամ լեռան լանջին ուժեղ բախումից, կամ ներսում տեղադրված պայթուցիկ նյութի առկայությունից: Գնդակոծությունից պայթելու վարկածը քիչ հավանական է: Ինչ վերաբերում է նրան, թե ուղղաթիռի Ֆյոդորովիչի վրա գնդակների հետքեր են հայտնաբերված, առայժմ ինչպես պարզվել է, այդ ուղղաթիռը դեռեւս նախկինում մասնակցել է Աֆղանստանի անփառունակ կռիվներին եւ Արցախի տարածքում էլ քիչ չի նեբարկվել գնդակոծությունների: Ի մի բերելով այս բոլորը, կարելի է եզրակացնել, որ ադրբեջանական փորձագետների արած հայտարարությունները դեռ հիմք չեն տալիս միանշանակ ասելու, թե ինքնաթիռը վթարվել է գնդակոծության հետեւանքով եւ, եթե նույնիսկ գնդակոծվել է, ապա պարզ է, հայկական կողմն այդտեղ մեղք ունենալ չի կարող: Ինչ մնում է հատուկ հրթիռով խփվելուն, ապա ոչ Մարտունու շրջանի Բերդաշեն եւ ոչ էլ շրջակա հայաբնակ Աղան, Նորշեն գյուղերում նախկինում եւ վերջերս հրթռային կրակակետեր չեն արձանագրվել, ընդհակառակը, եւ Աղդամից, եւ Գյուլաբլու գյուղից հրթիռներով ռմբակոծվել են հայաբնակ Խրամորթ, Վարազաբույն, Դահրավ եւ Ավդոտ գյուղերը: Մընում է, որ նոր ժամանած հանձնաժողովը անկողմնակալ ստուգումներով պարզի իրերի իսկական վիճակը՝ հայտնաբերելով իսկական մեղավորներին եւ թույլ չտա Ադրբեջանի մի շարք առաջնորդների՝ այդ պատահարն օգտագործել իրենց քաղաքական նպատակների համար:

ԼԵՎՈՆ ՄՈՒՇԵԼՅԱՆ

Արտահանման դիմաց ստացված դրամը բավական չէ

Արտաքին տնտեսական հարցերով զբաղվող հայտնի փորձագետը «ԻՖ»-ին տված հարցազրույցում կասկած հայտնեց, որ նախկին խորհրդային հանրապետություններին բավական չէ արտահանման դիմաց ստացված դրամը ԽՍՀՄ-ի պարտքի իրենց մասը վճարելու համար:

Փորձագետի կարծիքով, որը վկայակոչում է 1991 թ. երրորդ եռամսյակի պաշտոնական տվյալները, միայն Ռուսաստանն ունի դրական հաշվեկշիռ: Ուկրաինայի կողմից արտահանվող արտադրանքի դիմաց ստացված դրամը «ծածկում է» ներմուծվող ապրանքների արժեքի միայն 75,9 տոկոսը: Բելառուսը, Ուզբեկստանը, Ղազախստանը, Տաջիկստանը մոտավորապես կեսը, Ադրբեջանը 40 տոկոս, Մոլդովան 28,6 տոկոս, Թուրքմենիան 20 տոկոս, Հայաստանը 14,5 տոկոս, Ղրղզստանը 14 տոկոս եւ Վրաստանը 10,5 տոկոս: ■

Վրաստանն ամրապնդում է կապերը Թուրքիայի եւ Իրանի հետ

Անցած շաբաթ տեղի ունեցան Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիայի հանդիպումները պաշտոնական այցով Թբիլիսի ժամանած Թուրքիայի եւ Իրանի պատվիրակությունների հետ:

Թուրքիայի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ քննարկվում էին Վրաստանին 400 միլիոն դոլլար վարկեր տրամադրելու, ինչպես նաեւ բարտերային գործարքների միջոցով հանրապետություն սննդամթերք ներմուծելու հարցերը: Հյուրերը Զ. Գամսախուրդիային հանձնեցին Թուրգուտ Օզալի նամակը, ուր նա հույս է հայտնում, որ կապերը երկու երկրների միջեւ մոտ ժամանակներս կընդլայնվեն:

Իրանի պատվիրակության հետ հանդիպման ժամանակ քննարկվում էին համատեղ ձեռնարկությունների ստեղծման, արեւելք-արեւմուտք ժամանակակից ավտոմայրուղու կառուցման նախագծերին երկու կողմերի մասնակցության եւ այլ հարցեր: Իրանի պատվիրակությունը առաջարկեց Թբիլիսիում բացել Իրանի հյուպատոսարան, իսկ Թեհրանում՝ Վրաստանի:

Զվիադ Գամսախուրդիան երկու հանդիպումների ընթացքում նշեց, որ Վրաստանի հետ հետագա բարիդրացիական գործարար հարաբերությունները կարող են ամրապնդվել միայն նրա անկախությունը ճանաչելու դեպքում: Թուրքիայի եւ Իրանի պատվիրակությունները հավաստիացրին Զ. Գամսախուրդիային, որ այդ հարցը ամենամոտ ժամանակներում կքննարկվի երկու երկրների կառավարությունների կողմից: ■

500 միլիոն էկյու նախկին ԽՍՀՄ-ի համար

Այսօր կամ վաղը Բրյուսելում նախատեսվում է պայմանագիր ստորագրել Միջհանրապետական տնտեսական կոմիտեի (ՄՏԿ) եւ Եվրոպական հանրության հանձնաժողովի (ԵՀՀ) միջեւ, որով 500 միլիոն էկյուի չափով վարկեր են տրամադրվելու նախկին ԽՍՀՄ-ի հանրապետություններին սննդամթերք մատակարարելու համար: ՄՏԿ-ի նախագահ Իվան Սիլաեւը մեկնեց Բրյուսել:

Փորձագետների կարծիքով, ամենամեծ խնդիրները կապված են այն հանգամանքի հետ, որ դեռ պարզ չէ, թե որքանով եւ որ հանրապետություններն է ներկայացնում Ի. Սիլաեւը Բրյուսելում տեղի ունենալիք բանակցություններում: ■

Մ. Գորբաչովը խոստանում է ճանաչել Վրաստանի անկախությունը

Միութենական պայմանագիրը ստորագրելուց հետո Վրաստանը անկախ պետություն կճանաչվի: Այդ մասին, ինչպես հաղորդեց Վրաստանի նախագահ Զվիադ Գամսախուրդիան, իրեն հավաստիացրել է ԽՍՀՄ նախագահ Միխայիլ Գորբաչովը հեռախոսային զրույցի ժամանակ: ■

ԽՍՀՄ-ը դեմ է պատժամիջոցներին

Այժմ Խորհրդային Միությունը նպատակահարմար չի գտնում որեւէ տնտեսական պատժամիջոցներ կիրառել Հարավսլավիայի նկատմամբ: Այդ մասին հայտարարեց արտաքին հարաբերությունների նախարարության տեղեկատվության վարչության պետ Վիտալի Չուրկինը նոյեմբերի 25-ին ԽՍՀՄ արտաքին հարաբերությունների նախարարությունում տեղի ունեցած բրիֆինգում: Սակայն, նրա խոսքերով, Մոսկվայում այդպիսի հնարավորությունը ամբողջությամբ չի բացառում: Առայժմ հնարավոր է լուծել այդ խնդիրը առանց ծայրահեղ միջոցառումների, ասաց Չուրկինը: ■

Լուրերը՝ Interfax-ի եւ մեր սեփ. թղթակիցների

Հայաստանի պաշտպանության կոմիտեի նախագահը վստահեցնում է

Իրավիճակը հանրապետությունում եւ Արցախում դարձյալ բարդ է: Հերթական քաղաքական բախման առարկա դարձավ նաեւ ուղղաթիռի վթարը. Ադրբեջանի հետ լարվածությունն առավել ուժգնացավ:

Նոյեմբերի 25-ին Հայաստանի Գերագույն խորհրդի նստաշրջանում ընդունվեց զինապարտության մասին օրենք: Այդ կապակցությամբ օրենքի ընդունումից անմիջապես հետո դիմեցի ՀՀ պաշտպանության կոմիտեի նախագահ ***Վահան ՇԻՐԻՆՅԱՆԻՆ:***

– Ադրբեջանի այդ վայնասունը ավելի շատ կապված է իշխանության համար ներքին պայքարի հետ. Մութալիբովի եւ ժողովրդի միջեւ, քան թե Ղարաբաղի խնդրի լուծման հետ: Ամեն դեպքում չեմ կարծում, թե սա կարող է հասցնել մեծ ռազմական ընդհարման: Պատերազմ սկսելը մեծ պատասխանատվություն է, այսպես ասած, խորհրդային ամբողջ երկրի եւ ժողովրդի առջեւ:

Մեր այսօրվա խնդիրը Հայաստանի սահմանների պաշտպանությունն է, որը մասամբ իրագործում են խորհրդային բանակի զորամասերը, մասամբ ՀՀ սեփական ուժերը: Մեր Արցախի հայրենակիցների խնդիրը նույնպես պաշտպանությունն ու անվտանգությունն է, որը պատշաճ վիճակում է: Այս ամենը շատ լավ գիտեն նաեւ ադրբեջանցիները: Այսօր պաշտպանությունը բավականին կենտրոնացված է եւ չեմ կարծում, որ Բաքվում տիրող իրավիճակը դառնա անկառավարելի, որից, իհարկե, իրենք են տուժելու: Չեմ կարծում, որ այսօրվա մեր զինադադարության մասին օրենքի ընդունումը կապված է ռազմաքաղաքական իրավիճակի հետ: Այն միշտ էլ բարդ է եղել, գուցե այսօր առավել, քան առաջ: Սա պարզապես մեր հերթական աշխատանքն էր, հանրապետությունում հավաքվել են մեծ թվով զինակոչիկներ, որոնք պետք է մտնեն պետական կառուցվածքների մեջ, դաստիարակվեն, զինվորներ դառնան:

ԳԱՅԱՆԵ ՄԱՐԻԿՅԱՆ

Իրանը չի ճանաչում Ադրբեջանի անկախությունը

Իրանի արտգործնախարար Ալի Աքբար Վելայաթին կիրակի օրը տասնօրյա պաշտոնական այցով Մոսկվա ժամանեց: Մոսկվայում կայանալիք բանակցություններից եւ նախագահ Ռաֆսանջանիի ուղերձը Գորբաչովին հանձնելուց հետո, Վելայաթին մտադիր է այցելել նաեւ Խորհրդային Միության մահմեդականներ վեց հանրապետություններ: Ղազախստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Ուզբեկստանի, Թուրքմենստանի եւ Ադրբեջանի ղեկավարների հետ Վելայաթին քննարկելու է իրանական հյուպատոսարանների բացման հարցը:

Իրանի արտգործնախարարի այդ մտադրությունը գոհունակությամբ է ընդունվել Շեւարդնաձեի կողմից, որի կարծիքով, այդ քայլը դրական լիցք կարող է հաղորդել Մոսկվա-Թեհրան հարաբերություններին: Զանգվածային լրատվական միջոցներից տեղեկանում ենք, որ Իրանը մտադիր է օդային հաղորդակցության ուղիղ կաղ հաստատել Ադրբեջանի, Թուրքմենստանի եւ Ղրղզստանի հետ: Թռիչքները կատարվելու են նշված հանրապետությունների մայրաքաղաքների ու Թեհրանի, Թավրիզի եւ Մաշհադի միջեւ:

Այս օրերին Բաքվում է գտնվում նաեւ Իրանի իսլամական հանրապետության գլխավոր դատախազ Մուսավի Թաբրիզին, որին կիրակի օրը ընդունել է Ադրբեջանի նախագահ Մութալիբովը: Մուսավի Թաբրիզին գոհունակությամբ է արտահայտվել իրանա-ադրբեջանական հարաբերությունների արագընթաց զարգացման մասին:

Երկուշաբթի օրը Իրանի արտգործնախարարը հանդիպում է ունեցել Խ. Միության իրանագետների հետ, որի ժամանակ առաջարկել է խորհրդային իրանագետներին համագործակցել Իրանի արտգործնախարարությանը կից գործող քաղաքական ուսումնասիրությունների կենտրոնի հետ: Հանդիպման ժամանակ Վելայաթին հույս է հայտնել, որ Խ. Միությունում տեղի ունեցած վերջին իրադարձությունները կնպաստեն իրանագիտության զարգացմանը:

Երեկ, Մոսկվայում կայացած մի ասուլիսի ժամանակ, Վելայաթին նշեց, որ Իրանը պաշտոնապես չի ճանաչում Ադրբեջանի անկախությունը եւ ցանկանում է նրա հետ իր հարաբերությունները զարգացնել Խ. Միության հետ գոյություն ունեցող հարաբերությունների շրջանակներում:

Գ. ՍՈՍՔԵԼՅԱՆ

«Սոյուզպեչատի»-ի բոլոր բաժանմունքներում եւ փոստատներում շարունակվում է «ԱԶԳ» թերթի բաժանորդագրությունը: Թերթը լույս է տեսնում շաբաթական երկու անգամ:

ԴԱՍԻՉ՝ 69149

Տարեկան բաժնեգինը 25ռ. 92կ.

ԼՈՒՐԵՐ ԵՎ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ

Հաջորդ տարվա հունվարի 1-ից թերթն ստանալու համար անհրաժեշտ է բաժանորդագրվել մինչեւ դեկտեմբերի 1-ը:

Azg semi-weekly, 47 Hanrapetoutian st., Yerevan, Armenia, 375010

Խմբագիր՝ Հ. ԱՎԵՏԻՔԵԱՆ
Editor H. AVEDIKIAN

Macintosh համակարգչային շարուածը
Ռ.Ա.Կ. մամլոյ եւ տեղեկատուութեան կենտրոնի

ՀՀ նախարարների խորհրդին առընթեր «Պարբերական» հրատ. տպարան, Արշակունեաց 2

digitised by A.R.A.R.@